Բաքոս գեղեցիկ՝ սորին էր որդի, [2]
ախտամոլ չար՝ նախնեաց սիրելի.
Ուժմ գինեխոս՝ անուն ընծայի,
չար խաղողոյ՝ և գինւոյ կոչի։

և զգուսար մի պերսէֆանէ. զոր յափշտակեաց պղուտոն տարեալ ի դժոխս. եւ կայ մայրն լուցեալ երկու չահս ո րոնէր սիւս և գիշեր՝ գեղերելով ի վէր անծայր լերին. տալա եդիտ զնա ի խորչս խաւարին. որ զկէս տարւոյն մնայր ի գժոխս ընդ առն իւրում, և զկէս տարւոյն ընդ մօր իւրոյ ի վէր երկրի։ Բանասաեղծք յայսպիսի ինն առասպել ձևացուցանէին զլուսինն. որ երբեմն լանայ և երբեմն նուազի, յերկաքանչիւր կողմն հոզագնաց դե գերելով։

1 Ասյս չծծուհի 1409 ամօք յառաջ քան զքն գնաց սան յեգիպտոսէ ի յունաստան, և առեալ զորդի Թա գաւորին առաքիկեացց փրկագնմս կոչեցեալ, կամեցաւ անմահացուցանել զնա, ընդոյ ի տունկիսան գիւցական ին կաճառ, և ի գիշերի պահէր ի մէջ հրոյ. և առա եդեալ ի վէր սայլի միոյ վարելոյ յօձից՝ առաքեաց ընդ ամ աշխարհ ուսուցանել զերկրագործութիւն. որ նախ սերմանեաց սան յաթէնս մերձ ի գաշան եղիւսեան (746)։ Ծնող և զայլ մասցածին բանս։

2 Բաս հնախօսից՝ բաքոս յաղթութի մեծ արարեալ ի հնդիկս, ուսոյց անգանօր զարուեստ գարմանելոյ զորթ. որով և համարեցաւ չծծ խաղողոյ և արբեցութե. զոր նախնիք նկարէին մանուկ ի մէջ չծծուհեաց. բայց հա սարակօրէն գրօչէ լինէր՝ բազմեալ ի յաղթական կառս ձգեալ վերթ ի յովազից, և վերթ ի վագերաց։ Սա ի մէջ կոչի պանդաբաչ. զի ի ծոյի սորա լինէին բազում սպանդք, որ հանդիպէր յամենայն ահեկանի։ Ե հայ. Ը. 7։

644 Ի՛ ՍԻՂԵՆՈՍ ։

Սիղենոս արբշիռ՝ ընկեր բաքոսի ,[1]
անգեղ անհեթեթ՝ և լիրբ ծերունի .
Որ և մեծափոր՝ և կարճ հասակաւ ,
հեծեալ յաւանակ՝ նրկարեալ լինի ։

645 ՅՈՒՆՈՊՈՍ ԴԻՈՍ ։

Ա՛յլևայլ որդիք՝ ծրնան դիոսին ,
դըստերք և Թուուն՝ զանազան նորին .
Կարգեալ՛ի վերայ՝ այլևայլ իրաց ,
վարչին զաշխարհ ըստ դիցամոլաց ։

646 ՀԵՐՄԷՍ ։

Հերմէս դիւցազն՝ որդի դիոսին ,[2]
դեսպան և Թարգման՝ չածոց խըմբին .
Ոլորտիչ արուեստից՝ տուօղ գիտուԹեց ,
չածք վաճառաց՝ պերճախօսուԹեց ։

647 Ի՛ ԱՐԷՍ ։

Ահակ արէս նոյնպէս՝ նորուն էր որդի ,[3]
չածք զինուորաց՝ և պատերազմի .

1 Բառն՝ ՍԻՂԵՆՈՍ նշանակէ հնձանաուշըվնկ , որ է առաջ պեղեալ ծերունին՝ ընկեր , կամ դասախարակ բաքոսի . զոր նկարէին անհեթեթ , արիւնրուռչտ , արբեալ , հասուննչ , պորտապարսր և կարճ , հեծեալ յէշ անկար՛ի քայլել՝ ուսնելով՛ի ձեռին գինի . յորոյ անուն ձայնէին զգինեմոլս ։

2 Հերմէս ըստ դիցաբանից համարիւր չածք պերճախօսուԹե և աւազակուԹե . որ գողով դեսպան չածոց՝ առնի ասէին զնոգիս մարդկան՛ի գժոխս , և երբ կամի՝ հանէ անտի ։ Ունէր Թև՝ ի գլուխն . և օձապատ վիրդ՛ի ձեռին , ըստ որում նկարի ։ Ի սորա անուն զվէցերդ մոլորական փայլածոյս կոչէին Ջոփոսիոս ։ Ենթադրեն , Թէ այս չածք ընդ ամերոգիտեայ խառնեալ , մի չածք եղեալ է Համաքրօքիս անուամբ . յր հերմոպերդիա կամ արուեստ . զորմէ և բազում ինչ առասպելաբանեին (982) ։

3 Ահմանք՛ի բանաստեղծից , ասեն Թէ հերա չածուհի

Որ վառեալ գըրի՝ յոտից ցգլուխ ,
այլևայլ զինուք՝ պատերազմողն ։

648

Ընդ սովաւ գարձեալ՝ աքաղաղ գրի ,
որ է նշանակ՝ իւր բարերարի ։
Ի նմանէ եդեալ էր զայն՝ ի պահնորդութիւն ,
յանկարծ փոխեցաւ՝ ի սոյն կենդանի ։

649 Այս հեքեստոս ։

Հափեստոս չոճ՝ դարբնաց ձանաչի , [1]
տրգեղ ոձրագործ՝ որդի դիոսի ։
Որ իբրև ծնաւ՝ կիցըս արձակեալ ,
ձգեաց ի խոնարհ՝ դիոս զայն որդի ։

650

Սա ինքըն հըրոյ՝ չոճ համարի ,
չինօղ կայծականց՝ սակըս դիոսի ։
Այս զինըս պէսպէս՝ ի պէտս այլոց դից ,
ձեռամբ կիկղոպայց՝ իւր պաշտօնէից ։

յղացաւ զսա առանց գիոսի , միայն հպելով ի ծաղիկ ինչ առ ի վրէժխնդրութիւն գիոսի ։ որ զաթենասն ծնաւ առանց հերայի յուղղոյ իւրմէ ։ Զամանէ գրէ հոմերոս չղթայակապ ծանակ լինել չոճոց , ևն ։ յորոյ անուն ձայ նեցին զերդ մուրճաին հրատ՝ ծառ ։ յանուն սորա եդաւ սմիան ծաղ ։

1 Սա համարի չոճ հրոյ և գարբնին չոճոց ։ որ ըստ առասպելացդ գողով որդի գիոսի , իբրև ծնաւ՝ այնչափ ագեղ էր և սոսկալի , մինչև ձգեաց գիոս զայն յերկինից յերկիր ։ յորմէ խորտակեալ ոտիցն եղև կաղ ։ զոր առ ի մխիթարել էառ նմա ի կնութեի զափրոդիտէ ։ և կարգեաց յօրինել զանթս ի ձեռն պաշտօնէից իւրոց կիկղոպայց (725) ։ Ասյս կուռք ի մեզ կոչիւր մխր ։ որոյ և արձան կանգնեալ էր ի գաւառն գերջան ։ զոր երբեր ի յունաց ա արտաչէս ։ Հեթանոսք ընծայեցին հեփեստեայ զգիւտ թոթբելոյ ։ որ ա՞ր գրոց * Էր Ձարտարապետ դարբին պղնձոյ և երկաթոյ ։ ։ ծն ։ ը ։ 22 ։

651 Ի՛ էր պալլաս։

Ի՛ պատերազմից՝ մեծ չնաշուհի,
առանց մեր ծնեալ՝ յուղղոյն դիտոի.
Ո՛ր բարհաւորեալ՝ զինուք նըկարի,
զոր և կառավար՝ ասեն արեսի։

652 Ա՛ն ալենաս։

Ոտկ աթենասն է՝ նոյն ըստ պալլասի,[1]
ծնեալ՝ ի յուղղոյ՝ ի ցոյց խմաստի.
Վանզի գիտուքն՝ սա չնաշուհի,
պաշտպան խմաստնոց՝ դըտիչ հանճարի։

653

Ի՛ գլուխ սորա՝ սաղաւարտ դընի,
նոյնպէս առ ոտիւք՝ բուռ նըկարագրի.
Վանզի այս թռչուն՝ ըստ մուքն տեսանէ,
նոյն և գիտուքն՝ ոչ երբէք նընջէ։

654 Ա՛ն արքեդիս։

Ա՛րտեմիան՝ ի մեզ՝ անահիտ ձայնի,[2]
մերոց աշխարհաց՝ մեծ չնաշուհի.

1 Սա նոյն հռոմարի ընդ պալլասայ՝ ի մեզ նմանէ կոչեցեալ, որ էր մեծահռչակ չնաշուհի խմաստուքն և արուեստից. որ եւ յուղղոյ դիտոի. վ՛ի զի յաւուր միում ասեն դիտոս առ սաստիկ գլխացաւութեն չոքաւ առ հեփեստոս, և հրամայեաց նմա հարկանել և ճեղքել զգլուխ իւր. և ահա եւ յուղղոյ անտի խմաստուհին աթենաս. զոր դիք զգուշացան ամուսնացուցանել վ՛ի սիրելոյ զկուսութեն, որոյ բագին էր ՛ի Թիլ աւանի։ Սմա ընծայի Թուաբա-
նութեն, և մեծ մասն գիտուքեց. նաև ձիթենին նշան հաշտութեն. զորոյ և զամն կատարէին հռոմայեցիք ՛ի 3 յունվարի, որ տեւէր մինչև ցինն մարտի. ՛ի նմին ժամա-
նակի ազաւերտը տանէին զընծայս վարժապետաց իւրեանց։ Մեծի չնաշուհի չոչ երիգիմի ՛ի նշան տեսութեն նո-
րա զանգեան և զապատնին. որում տաճար չինեաց հռո-
մուլոս ՛ի հռոմ, որ էր նոցա չոչ տարեդ (484)։

2 Ընդհակիտ մեծ չնաշուհի հայոց և քոլոր ասիոյ՝ որ

Պաշտպան ասիոյ՝ որսորդ համարեալ,
այլև մանկաբարձ՝ դիւացազանց կոչի։

655

Սա փառք կեցուցիչ՝ կոչեր մեր ապգին,
և ոսկիմայր՝ կամ ոսկիածին.
Ցօն մեծ կատարեր՝ ի վարդավառին,
վարդիւք զարդարեալ՝ զմեհեան և բագին։

656 Ասոյ ճնաւ։

Ա՛յս չքնծուհի՝ դուստր էր դիոսի,
ծնեալ ղետովայ՝ դըստեր կեոսի.
Ի՝ նորոգ յայտնեալ՝ ի դեղս կղզի,
զի ոչ ետ երկիր՝ ծընեղոյն տեղի։

սորդ համարեալ, քոյր էր ապողինի. որ ի ժամանակս հեթանոսութեանն այնչափ պատուեալ էր ի հայս, մինչև ֆառ և կեղոցիլ ձայնեին զնա. որոյ և բագին ձոյլ ոսկի՝ կանգնեալ էր յերիզայ, յաշտիչատ, և յայլ քաղաքս. յորմէ և կոչեին ոսկիմայր, կամ ոսկիածին. և ընդ ոտիւք վէմ զի տուն նորա կատարեր յառաւտուանէ վարդից, որով զարդարեին զբագին նորա և զմեհեանն. ևս և զքաղաքսն, յորս էին պատկերք նորա: Եւ նորին աղաչեալ զնա տուն կոչէր վարդավառ, կամ անահիական ցօն, որոյ փոխան կարգեաց ՚ի լուսաւորչէն զտօն հրաշափառ պայծառակերպութեանն քրի: ՚ի գլուխ սորա նկարիւք լուսին. որով հօթնեկրդ մոլորակ համարեցաւ ՚ի բանաստեղծից, որ և յայլոց կոչի պիանո. եթէ ընդհերցոյն յաջակողմն՝ լինի անախ: Ասյս կուռք էր, որում պատկ դնել հրամայեաց տրդատ՝ գրիգորի լուսաւորչին:

1 Վէտով ըստ առաքելաբանից դուստր էր կեոսի տէտանայական, և եկն կին դիոսի. Ըստ որ զայրեալ հեթանոցդ ասեն զերկիր, զի մի տացէ տեղի վէտովայ առ ՚ի ծնանիլ զմանկունս՝ կարգելով և վիշապ մի զնին նոցա. սակայն պոսիդոն գթացեալ ՚ի նա ՚ի վեր եհան ՚ի ծովէ զնոր կղզին դեղոս. ուր ծնաւ զաբրահմիա դուստր, և զապողոն որդի նոր:

657 ԱՒ էր հեծէ։

Ձիակն վեհաղուն՝ դուռտըը դիոսի, [1]
դարձեալ և նորուն՝ մատուռ ակուհի.
Ակըռ ի ձեռին՝ նեկոտ ըմպելի,
պատանեկութե՜ն սա չծոուհի։

658 Յ՚ պարոյս։

Պարքայք երեք քորք՝ դըստերք դիոսին, [2]
կարգեալք ի վերայ՝ կենաց մարդկային.
Որոց երկոքին՝ մանկին զկեանս,
և միւսն հատանէր՝ ըզթելըս նորին։

659 Յ՚ ափրոդիտէ։

Ըզքնաղն ափրոդիտ՝ գեղեցիկ մկին, [3]
ծնեալ ի փըրփրոյ՝ ըս առասպելին.
Որ փութով չնորհք՝ յերկինըս ածին,
և չծոուհի՝ սիրոյ կարգեցին։

---

1 Ակռատար է ըմպելի ինչ դից, զոր կրէ ի ձեռին հիմն չծոուհի առ ի մատուռակիզ դից։

2 Սոքա ըստ առասպելոյ են չծոուհիք կենաց, որք երևեին ոչ սպասս կերպարանօք. որոց առաջին կոչեալ անուն՝ զգեցեալ պետութ՝ ունէր ի ձեռին զնիւթ ինչ մանելոյ. որ նշանակէր զմարդկային կեանս, որ հոլովի։ Երկրորդն չտեսանի զգեցեալ՝ մանէր, կամ հոլովէր զնիւթն յուշանելով զհոլովել կենաց, և զանցանել։ Իսկ երրորդ պարսպ անուն սևազգեաց՝ հատանէր զթելս, ծանուցեալ զվայրկեան մահու, որ կարճ զկեանս. ուր թել կենաց առաքինեաց էր յոսկւոյ, իսկ ոճրագործ ծայն՝ յանարգ վերջ։

3 Ձնունական ձայնս աքրօքէն Թարգմանի փրփրաձին. զի ծնեալ է ասեն ի փրփրոյ ծովու. յոր կաթեալ եցե արիւն ուռանոսի. սա ասեն այնչափ գեղեցիկ էր, զի շնորհքն անդէն ածին զնա յերկինս. ուր և կարգեցուցեալ չծոուհի սիրոյ շնորհաց՝ գեղեցկութե՜ն, և հեշտութե՜ն։ Ի գլուխ սորա գրի հինգերորդ մեղրաձայն արուեստակ, յորոյ անուն ի մէջ ձայնի ասպղէն. իսկ բագին նորա կանգնեալ էր յաշտիշատ քաղաք հայոց. որոյ և

660

Դատձեալ փափկութեան՝ սա չծծուհի,
այլ ի մեզ յաւէտ՝ ապրէիկ յորջորջի.
Օ՛ն ասօղ մի պայծառ՝ ի գլուխն ունի,
որ է լուսաբեր՝ տիպ արուսեկի։

661 Այս ո՛ էր որդին։

Խակ որդի սորա՝ կոտլիդոն կոչի, [1]
որ պատանեակ մերկ՝ կայր աջօք գըրի.
Ջահ մի բոցավառ՝ ի ձեռին ունի,
կապարճ և աղեղն՝ ի թիկնամիջի։

662 Ո՛վ էր ապողոն։

Ապողոն չծծ՝ նուագարանի, [2]
եղբայր արտեմեայ՝ ղետովայ որդի.
Այր այնչափ քաղցր էր՝ երաժշտութիւն,
մինչև ընդարմանալ՝ մարդ և կենդանի։

մի հեռանն կոչէր սննեակ հափագին. և այնչափ պատուեալ էր ի հայս, զի լի էր ոսկւով. ուր շինեցաւ առաջին սե՛ղան, և մայր եկեղեցի հայոց աշխարհին։

1 Ջսա ի հնուէն կայր կամ կապեալ աջօք նկարէին ի նշան սիրոյ. իբր զի կայր է սէր. բայց այժմ առ վայել՝ չուեցեր երիզ մի նեղ կապէն ի գլուխն։ Սմին նման ձևացուցանէին զբազդն կապեալ աջօք, և ի ձեռին եղջիւր առատութեան, յորմէ թափին բարիք. ոսք նորա էին թևաւոր. և միով ոտամբ կացեալ ի վր թևաւոր գնդի շարժի յամենայն հողմոց և դիպուածոց։

2 Ապողոն որդի գիտի ծնեալ ի զեւտովայ՝ էր չծծ աբեղական, բանաստեղծութեանց, երաժշտութեանց, և ամենայն մտաւոր գործողութեանց. զոր իբրև բարկացեալ նկարեն՝ ասն ի ձեռս զնեաս. և յորժամ զինջեալ՝ ասն նուագ դարան։ Սա վարէ ասեն զարեն, և լուսաւորեալ զօրն կոչի ֆէբոն։ Ջամանակ առասպելէին, թէ զմանուկն սէր բարիս իւր սիրելի՝ որ մեռեալ էր վասն սպանանելոյն զեղջերու իւր, փոխեալ եցէ ի ծառն նռնձի. յորմէ զայս ծառ անկէին ի գերեզմանատունս։ Սորա բացին գրեթէ յամենայն տեղիս դտանէը. այլ առաւել հաչակելին

663

Այս դարձեալ չիմ՝ բանաստեղծութեան,
այլև հոգեղէն՝ գործոց առնային.
Վկայ ի Թիւկունս՝ յոտից ագռաւ մի,
պըսակ դաբնիդեայ՝ ի գլուխն ունի։

664 Յա նմա։

Մոմս խեղկատակ՝ ծընունդ գիշերի,
չիմ լիմարաց՝ այլև ցուփ քանի.
Օ՛ի միշտ եպերկը՝ զարարս այլոց դից,
ոյր և արձանին՝ դէմքն ե ծաղրալի։

665 Յա ի մարգեաս։

Ասկ մարփևս չիմ՝ քընոյ երազի,
ըզտունկ մեկնի՝ ի ձեռին ունի.
Որով երբ ննջէն՝ ի մարդիկ հըսկի,
պատճառե՛ ի միտ՝ զանուրջ բիւրազգի։

666 Յա հարպոկրատես։

Հարպոկրատես եր՝ չիմ լռութե,
լռել տայ մարդոյ՝ ըստ պիտանութեան.
Այր և դրօշուած՝ քարոզէ անձայն,
ունելով զմատն՝ եդեալ՝ ի բերան։

եր՝ ի գերեզս կղզին։ Ասկ՝ ի հայս՝ կանգնեալ եր յարմատս ուխտ. զոր եբեր յասիոյ ։ արտաշէս պղնձազոյզ ոսկեզօծ։

1 Մոմս չիմ խեղկատակութե կի եպերթնայ՝ Թարգմանի սփփանս. զի միշտ երգիծանէր զդիս և զմարդիկ. քանզի երբեմն հեփեստոս, աթենաս, և պռոմիթևս զսա դատաւորս կարգեցին՝ ընտրել, թե որ՝ ի նոցանէ գործ՝ իչէ գերազանց. բայց նա զերեսին ևս սկսաւ ծաղրել. Նախ մեղադիր հոմ հեփեստոսի այնու, զի ոչ է եղեալ՝ ի վերայ կրծոց մարդկան զպատուհան առ՝ ի տեսանել զգաղտնիս սրտին։ Մեղադրեաց զաթենաս, զի ոչ չէ նեալ էր զառն իւր չարժական. որպէս զի՝ ի հանգիստիլ չար գրացեաց՝ դիւրաւ փոխադրեսցի այլուր. իսկ ըզպռոմիթևս, զի զեղջիւրս ցլոյ ոչ է եղեալ առաջի աչաց նոցա. որպէս զի տեսցեն զոր միանգամ հարկանեն։

667 Յ– ասկղեպիոս։

Ասկղեպիոս էր՝ ծնունդ ապողինի,[1]
Ի կենատարոսէ՝ սընեալ համարի.
Յորմէ և ուսաւ ըղբժշկութիւն,
Կոչեցաւ չոճ՝ դեղոց դարմանի։

668

Օ որ և սատակեալ՝ մեծին դիոսի,
Ինդրեաց ըզվըրէժ՝ ընդ պղատոնի.
Վանզի նուազէր՝ զմահու տերութիւն,
Ի ձեռն ողջարար՝ իւրում արուեստի։

669 Յ– եղոս։

Ըդ եւղոս չոճ՝ հողմոց համարի,[2]
Ընէ արգելու՝ հողմիս ըստ կամի.
Որ և սակըս իւր՝ մեծ խնասուածէ,
Կոչեցաւ ծընունդ՝ որդի դիոսի։

---

1 Ասկղեպիոս էր չոճ բժշկութեան, և աշակերտ քիրոն ձիացւոյ. զորմէ առասպելէին, թէ բժշկեր զանբուժելի ախտս, մինչև մեռելոց անգամ կեանս տալ՝ի ձեռն դեղոց. որոյ վը դիոս զայրացեալ սատակեաց զնա. զի ապաքինիչ դեղոյն նուազէր զմահու տերութեն եղբօր իւրոյ պղուտոնի. Նկարիւր սա՝ որպէս ծերուկն ոք, ունելով՝ի ձեռն օձապատ գաւազան՝ի ցոյց խորագիտութեն և հանճարոյ, և՝ի նշան նորոգութեան կենաց. որովհետև օձն փոխեալ ոչին խորխն նորոգի. յորմէ օձն նշան է եղեալ բժշկութեան, որպէս և աքաղաղն՝ արթնութեան։

2 Այս չոճ հողմոց լը բանասաւեղծից էր թագաւոր կղզեայ՝ կարգեալ ընդ իշխանութեը պահպանի. որոյ ընծայն գիւան առագաստի նաւուց, որ և գիտուցթեամբ մակընթացութեանց, և ընթացից ամպոց՝ դուշակէր ասեն զհողմս, և զմրրիկս. յորմէ ասացին, թէ ընդ բռամբ ունի զհողմս։ Իսկ պան չոճ բնութեը պաշտեալ՝ի հովուաց՝ եգիտ ասեն զբրինգն. որ և համակր այծամորդ։

670 Յ֊ը վերջաւորիւն ։

Ալերտուհիոս չծծ՝ հրեռավմայելի ,[1]
փոփոխեր զդէմն՝ ըստ ժամանակի .
Յ զի երևեր՝ որպէս այգեպան ,
հընձող երկրագործ՝ է զի ծերունի ։

671 Յ֊ը պռոպէս ։

Պռոտևս որդի՝ ովկիանոսի ,[2]
արածօղ որթուց՝ որ կան 'ի ծովի .
Կերպարանափոխ՝ լինէր ըստ հաճոյս ,
'ի ձև անասնոց՝ քարի և փայտի ։

672 Յ֊ը ՌԷՓԻ ։

Մեմփիս իրաւանց՝ էր չծծուհի ,
կարգաց օրինաց՝ ծնօղ համարի .
Որոյ և դըստերք՝ ուղղաւորէին օրէնս ,
և խաղաղաւորէին՝ ըստ որում կեղծի ։

673 Յ֊ը ասպրէս ։

Ասորեա արդար՝ դուստր էր աստրևսի ,[3]
չծծ իրաւանց՝ օրինաց ասի .
Որիորդ ըզգաստ՝ չըքնաղ նկարի ,
ունելով 'ի ձեռս՝ երկաթեայ կշիռ մի ։

1 Ոմանք մեկնաբանեն , թէ այս այլաբոխս չծծ է նկարագրուելոյ 4 եղանակաց տարւոյն , որ ըստ ժամանակին պէսպիսանայ առ 'ի հասուցանել զպտուղս ։ Աստի վերտուհիոս իբրև երկրագործ՝ նշանակէ զգարուն . իբրև հնձող՝ զամառն . իբրև այգեպան՝ զաշուն . և իբրև ծերունի՝ զձմեռն ։

2 Պռոտևս , կամ պրոտէոս որդի ովկիանոսի , ըստ առասպելոյ էր մի 'ի չծծոց ծովու արածօղ ծովային որթուց և գուշակ ապագայից . այլ դժուարին էր յոյժ առնուլ 'ի նմանէ զտեղդ պատգամ , վն զի կերպարանափոխուէր թէ միտ անյայտ լինէր ասեն ։

3 Ըստ առասպելոյց ասորեա համարիւր չծծուհի արդարուհի . որպէս և ՌԷՓԻ չծծուհի իրաւանց , որ և Թարգմանի Իւստանա ։ Եղ ասեն յերկնից յոսկեղէն դա-

674 Յ՚ Նեմեսիս։

Ամողջմ նեմեսիս՝ զայն չմծծուհի, [1]
որ արդարութեան՝ դուստրը յորջորջի.
Օ՚ի վըրէժխնդիր՝ էր արդարութեան,
պըտակէր զարդարս՝ պատժէր զ՚պատժելին։

675

Ո՚չՔ սորա միշտ բաց՝ ըստ բանահիւսին, [2]
դիտէ, զամենայն՝ որ յերկրի գործին.
Որ և օրհորդ՝ գրի թևաւորը,
նստեալ՝ ի յանիւ՝ շրջի ընդ նմին։

676 Յ՚ Գղաւկոս։

Պղաւկոս դարձեալ՝ ճըշմարտըս էր ասի,
արկեալ զինքն՝ ի ծով՝ ի չմծծ փոխի.
Որով պահպան՝ ծովու համարեալ,
թէպէտ այլանգակ՝ դիմաք նկարի։

677 Յ՚ Փայեթոն։

Փայեթոն՝ ի մեզ՝ հրաֆայլ լըսի, [3]
ըստ առասպելաց՝ արևուս որդի.

բու առ՝ ի բնակիլ յերկրի յաւուրս կռնոսի, կիճ Նոյն. յորում մարդիկ էին յերջանկութեան կիճ յանմեղ վիճակի երկրագործութեան։ Սակայն յետոյ մարդկային չարութիւնք աճեալք փութով զնա յետս դարձուցին։ Սա նկարի՝ կշռա՚ի ձեռին, յորինակ անաչառութեան։

1 Նեմեսիս՝ էր վրէժխնդիր արդարութե՚ն. զի գործ նը էր պատժել զանցաւորս զերծելը՚ի դատաստանի մարդկան, և պահել զարժանաւորս առ՚ի մարդկանէ անտես եղելը, բաշխելով զաւարիս խրաքանչիւր ը արժանեաց։

2 Ջամանէ ասէին ունիլ աչս մշտաբացս և արտասես. որով գիտէր զամենայն արարս յաշխարհի։ Նկարիւր թևաւոր նստեալ՚ի վերայ անուոյ, առ՚ի նշանակել թե հոլովէ շրջի ը աիւզերս. ունէր՚ի ձեռին չափ երկրա չափական անվրէպ։ Մեհեան նորա կանգնեալ էր՚ի հռոմ. որում զոհէին յերանէն՚ի պատերազմ։

3 Սա ասէն գոլով որդի ապողոնի կամ արևուս ինդ-

Որ խնդրեաց վարել՝ զկառս նորին ,
Հերքեհեաց զեթեր՝ անվարժ պատանին ։

678 Այս խոս ։

Ասես և կամ յով՝ մեծ ջածուհի , [1]
Մեծի սահմանաց՝ եգիպտականի .
Որ անօր ասեն՝ փոխեալ սա յարջառ ,
Անդ սոյն կենդանի՝ եղև պաշտելի ։

679 Այլ են գործոյք ։

Վորգոնայք երեք՝ քորք են ծովածին ,
Առ դուրս դըժոխոց՝ դեգերեալ նըստին .
Ձախա՞ւ գիսովք՝ պըղընձի ձեռօք ,
Մինչև աեսողաց՝ միտք ցընորէին ։

680 Այս այլ ինն ծառայք ։

Ասկ լինըն մուզայք՝ դըստերք գիսոսի , [2]
Երաժշտութեան՝ են ջածուհի .
Այլևայլ երգոց՝ բանաստեղծութեանց ,
Որքա հանձարիչք՝ ըստ առասպելեաց ։

բեաց ՚ի հօրէն գեթ օր մի վարել զկառս նորա . և իբրև Թոյլ եաս նմա , խրատեցոյց զերիվարս անվարժութիւն իւրով , և անցեալ ըստ սահմանն հրգեհեաց զեթերն և զերկիր միանգամայն . նմին իբրև պատժել ՚ի գիսոսէ կայծակ նահարութիւն արկաւ ՚ի պատուս գետ : Որ ահիարկէ Թերևս զպատմութիւն սոդոմայեաց . ըստ որում յինչ և մերս դաւիթ անյապէ .

1 Ըստ գիցաբանից գիսոս յերկիւղ կնոջն հերայ փա խեաց զսերուհին իւր յաՀ գուատոր ինաբայ՝ յարջառ . սա կայն հերա հալածեալ զնա յերկրէ յերկիր էարկ ասեն ՚ի ծովն յոնիական : Իսկ յով ասէ մեր և կոխեցից ՚ի կամ յաՀ եմ ես . որովհետև ոտք արջառոց կոխեալ ՚ի ոգմի ՚ի տպաւորեն , որ է ասել Նա . և ապա անցեալ բնդ նեղուցն պօղոյ կոչեցաւ տեղին Զօեբօրս , այսինքն անցք կովու ։

2 Ասաջնին մուզային կալլիօպէ անուն՝ իշխէր ասեն ՚ի վերայ դիւցազնական բանաստեղծութեց . եկին կդ՚ն՝

681

Ողջոյնս զանհամար՝ դիս մըտացածին ,[1]
դիւտ ապուշ մտաց՝ առաստաղարկուին .
Օ՜ անազան իրաց՝ զանազան չնած ,
զոր չիշել անգամ՝ ձանձրանայ միտք իմ։

ԴԻՒՑԸ ՕՁՈՒՆՔ ԿԸՄ ԿԻՍ-ԸՍՏՈՒԸՆՔ։

682 Օ՜ ինչ են կիսածք ։

Կիսածք կոչին՝ այն դիք խառնածին ,[2]
որք ՚ի յատուածոյ՝ ւ՚ի մարդոյ ծընին .
Ո՜հ անտեղի՝ դիւտ մըտացածին ,
յանմահիյ սակի՝ առնել զմահածին ։

իշխեր պատմութեց . երդն էրապն՝ սիրալիր բանասաեղծութեց . ջրդն ԹալԹա՝ կատաղերգութեց . հինգերդն ՏլէօմՆԷ՝ եղերերգութեց . վեցերդն պէրպէրէ՝ կարաւուց . հօթներդն էապէրպէ՝ նուագարանաց . ութներդն պօպՆիֆա՝ տաղերգութեց . ինևներդն ոբաՒԹա՝ առտազգեստութեց : Ասյլ են պէՒԼայ 7 կուսանք . որք ՚ի հեթանոսաց համարեին ածուպղոյք մարգարեուհիք գուշակօդք զապագայս ։ Բայց ազա քնական լուսով ծանեան զնշած և պաշտեցին , մինչև ը կարծեաց ոմանց ինչ ինչ մարգարեացան վասն քրի ։

1 ՚Ի գարս հեթանոսութեց այնչափ մարեալ էին մարգ գիկ գՀեա կուց , մինչև 30000 ածս գնէին ը եւաբեայ գիբ է . գլ . 15 ։ Ասյլ են առանին չնածք , զոր լատինք բՆՆագԷս կոչեն . որք էին փոքրիկ կուռք եգեալք ՚ի զաՆատն տեղիս տանց ըբք պաշտային . որոց մատուցանէին գինի և խունկ ։

2 Կիսածք ՚ի մեզ պէՒոպոսն ասին . ը ՚ի զարմէ գինց , որ նշանակէ փօքուն , կամ փառաւոՒեայ , ՚ի յատնոց կոչեցեալ էբօս , կամ հՆբօս։ Աբդ՝ գիցամոլք զորս միանգամ

683

Ա՛րք մեծահըռչակ՝ ի գերագունեին,
ծընունդ չածոց՝ լինել կարծեցին.
Հէրօս կամ դիւցազն՝ վերակոչեին,
իբր աստուածամարմ՝ ւ՛ի զարմէ նոցին։

684

Սակայն նանրասեր՝ միաք դիցամոլին,
չըգիտէ զանարգն՝ և ո՛չ զանտեղին.
Ա՛յն որ էր ինքեան՝ յոյժ պատկառելին,
պանծայ վերթ ծընունդ՝ նածականին։

685 Այն է առաջին։

Յաղթօղն հերակլէս՝ այն անպարտելի,[1]
գլուխ հըսկայից՝ սարսիչ աշխարհի.
Որ ի դիոսէ՝ ծնեալ համարի,
որոյ կիսաստուած՝ դիւցազուն կոչի։

686

Աըմա սնհամար՝ գործ վերըմնծայի,[2]
գործ գերմարդկային՝ արտաքոյ բանի.
Սակայն գլխաւորքն՝ էն երկոտասան,
զոր սերնդեսերէն՝ բանաստեղծից բան։

տեսանէին առաւելեալս ինչ ինչ կատարելութիւք, հեթա-
նոսական մոլոք ձայնէին Հէրօս, կամ աստուած, և կի աչ-
ափէ· զի համարէին զնոսա ծնեալ ի մարդոյ և ի չքոյ·
որք ի մեզ կոչէին և մոգեէն· յի զարմէ արամազդայ։

1 Հերակլէս, և կի հերքիւլէս գլուխ հսկայից՝ էր մի
միայն քաջ ի մէջ հելլենացւոց, իբր 1280 ամք յառաջ
քան զքս ծնեալ ի դիոսէ և Ալքմենայ կնոջէ ամփիտ-
րիոնի, որ գալով յօրօրոցի հեզձոյց զերկու օձս։

2 Գերահռչակ քարոզին սորա ծէ գործք· ա Հեզձոյց
սաեն զամէհի առիւծ մի, արկեալ զանձամբ զմորթեն։ բ
Սպան զսոսկալի հիդրան, որում բուսանէին երկու կի
եօթեն գլուխք՝ երբ հատանէր զմին։ գ Ըմբռնեաց զկինձ
կատաղի։ դ Կալաւ յարշաւելն զերագընթաց եղն մի ոս-

687 Ի՛ եր ա֊է֊լէ֊ս ։

Ա֊քիւլէս հզօր՝ եր պեղեայ որդի ,[1]
ուժեղ զօրաւոր՝ այր հրաշակերտ .
Օ֊որ սընոյց քերան՝ ուղղութիւք առիւծուց ,
առիւծանման՝ եղև պանծալի ։

688 Ն֊ո֊ վահագն ։

Վ֊ահագ֊ն հայկազուն՝ անխոնջ ի մարտի ,[2]
տիրէ աշխարհաց՝ ծովու ցամաքի .
Կռուեալ ընդ վիշապս՝ ըստ հընախօսին ,
զերթի չոճ պաշտի՝ ունելով բազին ։

կեղջիւր ։ Է Կռուածեաց զցուէն ապականիչ կղզւոյն կրե֊ տայ ։ Ը Սպան զդիմախաչս արքայ Թրակիոյ , որ մնուցա֊ նէր զձի իւր մարմնով հիւրոց իւրոց ։ Թ Զգեաց ի կամբիճ զվիթխարի հսկայն , և ի բաց տարաւ զկուռքն ոչխարաց ։ Ը Սպանեալ զվիշապն՝ ազատեաց զդուստրն արքայի , և յափշտակեաց զոսկի խնձորն ։ Ի Կապեաց չղթայիւք զկերբերոս (740) և ազատեաց ի գժոխոց զը֊ կանայս Թեսէոսի և Ասէթոսի ։ Ի Էառ ի Թիկունս զերը֊ կինս՝ օգնել առլսասայ (710)։ Ժ Սպան զարծիւն , որ կրծէր զլեարդն պրոմեթեայ (694) ։ Ի Որոշեաց ի միմեանց սահն զերկու լերինս ։ Ջօրաս արձան պղնձա֊ ձոյլ ոսկեզօծ երեք ի հայս ։ արտաշէս , և կանգնեաց ի տեղին վահեվահեան ։

1 Ա֊քիւլէս հռչակաւոր դիւցազն ընդ ամենայն աշ֊ խարհ , բազմօրինակ քաջութիւնս արար ի տրոյական պա֊ տերազմին . զորմէ առասպելէն հնախօսք , թէ անէծ եղև ի քերոն չհացլոյ՝ ուղղութիւք առիւծուց , և այլոց կենդա֊ նեաց . և ի ծնանիլն սահն մայրն ընկղմեաց զնա ի սուխ֊ գեան լիճ (742) , որով եղև անխոցելի ի զինուց , բայ ի գարշապարացն . ուր խոցեալ սպանաւ յեսու բազում֊ քաջագործութեբ ։

2 Վահագն էր որդի տիգրանայ երուանդեան զօրա֊ ւոր յոյժ և սքի , որ հանգոյն հերակղեայ այնչափ մե֊ ծամեծ գործս արուեստ եցոյց , մինչև արձան կանգնեցին յանուն նորա ի չափ հասակի իւրոյ՝ նախ ի վերս , և ա֊ պա յաշտիշատ քաղաք հայոց , և այնպէս ամացուցեալ

689 Յոտն ոդխաւս։

Ոսկ ոդխաւսն էր՝ այր երևելի,[1]
Ժամանակակից՝ մեծին Հերակլի.
Վակըս մեծամեծ՝ գործոց տրոյայ,
Ի կարգ դիւցազանց՝ վերառեալ լինի։

690 Յոտս այս։

Ասյաս էր երրորդ՝ յետ աքիւլէսի,[2]
պետ սաղամինոյ՝ քաջազունն արի.
Որ ի ժառանգել՝ զզէնն աքիւլէսայ,
Ցնորեաւ ի միտս՝ չոգաւ զիւրովի։

691 Յոտ բիւրասպէ։

Ծողովեաւ զաժդահակ՝ ձայնեաւ բիւրասպի,[3]
գիտող գաղտնութեանց՝ մոգ հրաշակերտ.
Ուզեաւ ի Տ՚րեղէն՝ լուծանել դիւցազանց,
Դիմեցին զԺողովրդ՝ առաջնորդ կարգի։

պաշտէին։ Ծողովեաւ զգիտացն և զերջայր նորա Դենդիր. որք էին հայկական կուռք հայոց կանգնեալք ի տարօն, երկայնութեամբ պղնձաձոյլ արձանացն էր 30 կանգուն և լայնութեամբն 2. զոր կործանեաց Ներսէս Լուսաւորիչ։ Սորա յաւուրս վաղարշակայ եկեալ ի հնգկաց ազգ ազգացն ի սերնդոյն Իբրեանց։ Եւ այնչափ պատուեալ էին, մինչև արգելեալ էր կանանց մտանել ի մեհեան նոցա, և ձիով անցանել անտի ուժգն։

1 Սա էր արքայ Իբակայ և գուղթայ կղզեաց. այր քաջ և խորագէտ, որ վն անպարտելի քաջութեամբ և ճար-աարամտութեան իւրոյ համարեցաւ մի ի դիւցազանց (728)։

2 Ասյաս տեղամնեան՝ արքայ սաղամինոյ էր նշանաւոր արութեամբ առ հելլենացին. նմին իբր գուն գործէր ժառանգել զզէնս աքիւլէսայ. այլ ոդխաս սեպհական-նեաց զայնս. ընդ որ ցասուցեալ այսոյ՝ ցնորեցաւ ի մտաց, և մեռաւ։

3 Սա ինքն բիւրասպի ի վիշապ փոխեալ անուանեցաւ աժդահակ. որ և նոյն լինել համարի ընդ ղարդևին պարսից՝ հեղինակին մոգութեան։ Սա ըստ պատմի էր որ-

692 Նա արգոս։

Ընդոս էր որդի՝ արիատոպային,
ունէր աչս հարիւր՝ ըստ առասպելին.
Ցկուսնէն միշտ բաց՝ և միսուն ի քուն,
լցեալ էր աչօք՝ բոլոր իւր մարմին։

693

Այս ամենագէտ՝ դիտող աշխարհի,[1]
պահապան յովոյ՝ ներկատիչ կարգի.
Օ՞ր և սպանեալ՝ կետոյ հերմեսի,
յարիշտակէ գ՞յով՝ կամօք գիտոյ։

694 Ո՛ էր պրոմեթէոս։

Պ՞րոմեթէոս՝ նախատես ասի,[2]
կերպացոյց զ՞մարդիկ՝ ի հողոյ երկրի.
Որ ապա ելեալ յեթերըս վերին,
գողանայ ըզհուր՝ և տայ աշխարհի։

գի որմընդդայ կի՞ գիտէ. որով և զինչն գիտակ բարոզէր ծածուկ խորհրդոց՝ ի ձեռն աստղագիտութեանն պատրեալ յով զժողովուրդն. բայց երբև սկսաւ ամենաւ մարդիկ զոհել գիւաց, հալածեալ զնա ի հրեղէն լեառն՝ ընկեցին ի վիհ մեծ ծծմբոյ. որ յետոյ ասեն ի վիշապ փոխեցաւ։ Խոր. գէրգ. ա. գլ. լբ։

1 Բանաստեղծք յօգնեն, թէ հերա կարգեաց զարգոս պահապան յովոյ (678). իսկ հերմէս հրամանաւ գիտ. ի սպան ասեն զարգոս. զորոյ զայս առեալ հերայ՝ ընդելուզեաց ի տուա թռչնոյ իւրոյ սերամարգի։

2 Սա բան առասպելից կերպացոյց զնախնի մարդիկ ի հողոյ կի՞ ի մոմոյ. և ապա միբձեցեալ յանիւն արեւու գոլացաւ անոնի հուր՝ առ ի հոգևորել զնոցա տեղծ մարդիկ. և գողացեալ զվիս զոհիցն՝ խաբեաց զդիոս. զի որ ցասուցեալ նորա առաքեաց ի մարդիկ պէսպէս ախտս հիւանդութեց (718), և ետ կապել չղխայիւք զպրոմեթէոս ի քարի ի լեառն կովկասու. և կարդեաց անդ զարծիւ մի, որ յամենայն օր կրծէր զնի մասն լերդի իւրոյ, այլ անդէն աճէր. զոր ապա ազատեաց Հերքիւլէս (686). Ընդ պրոմեթէոսի համարի և Նոխաէան. ի Թագա-

695

Սա ըզմիս զոհից՝ հառ դիւռնին,
Թաւիեաց ըզցասումն՝ 'ի վերայ անձին.
Որ առաքեաց զախտ՝ պէսպէս 'ի մարդիկ,
Ըզսրոմեթէոս՝ կապեաց 'ի քարին։

696 Յաւ ԼԻԿԱՅՈՆ։

Լիկայոն ազքայ՝ տիտանայ որդի,[1]
այր արեանաբքու՝ զինոյր զիւր որդի.
Երեամբ շաղախեալ՝ սեղան դիւռսի,
պատժեալ 'ի նմանէ՝ 'ի գայլ փոխարկի։

697 Յաւ ՊԵՂՈՊՈՍ։

Պելղոպոս որդի՝ էր տանտաղոսի,
զոր ըսպան հայր իւր՝ ջամբեաց դեմերտի.
Յաստւցեալ դիւռս՝ ըսպան զ'տանտաղոս,
անդրէն կենսացոյց՝ զ'խորովեալ որդի։

698 Յաւ ԴԻՈՄԻԱՆ։

Իակ դիւռմիանս՝ որդի արեսին,
կերակրեր զիւր ձիս՝ մարմնով մարդկային.
Յորմէ երիվարք՝ հրզօր ամենի,
մինչև հուր ընչէր՝ ընդ ունչըս նոցին։

ւորումեթէ սորա առեն էղև ըրհեղէդ, և սա ըլ կինոյն պիւ աչ մտեալ 'ի նաւ զերծաւ։ Յետոյ խորհրդով դիցն ա ռեալ զոսկեր մօրն մեծի, յր զքարինս երկրի՝ թաւալէ ցին 'ի թիկունս, որք եղեն մարդիկ. սակայն որք թաւա լեցան 'ի կնոջէն եղեն կանայք. և որք յառնէն՝ եղեն արք. ըստ որում պատմեն աւտսպէլարկուք. յէրէն ոչն կիւր. ՃԲ. և նարեկ. ղԸ։

1 Լիկայոն եբանէ 'ի յունական բառէս լիկոս. յր գայլ, որ էր թագաւոր արկադացւոց. յորոյ 'ի տան ասեն լինեալ նեցաւ գիւռս 'ի գիշերի միւռ. իսկ նա սպանեալ զոմն՝ եդ առաջի գիւռսի. այլ գիւռս ցասուցեալ հրձիգ արար զսուն նորա չանթառաք զորումեթէ իւրով, և զնա փոխեաց 'ի գայլ յանտառի անդ։

699 ։ Նաբդիեոս ։

Նարկիսոս էր Թոռն՝ ովկիանոսի , [1]
մանուկ գեղեցիկ՝ շրջքնաղ նազելի .
Որ ’ի ջուր տեսեալ՝ զկոր գեղ աննըմանն,
Հարեալ ’ի սէր իւր՝ ’ի ծաղիկ փոխի ։

700 ։ պարիս ։

Պարիս ’ի մէջ դից՝ գատաւոր կարգի , [2]
տայ ափրոդիտեայ՝ ըզկնճռոր ոսկի .
Ու նա զ’հեղինէ՝ շընորհէ նըմին ,
յորմէ տըրոյայ՝ պատերազմ ծագի ։

701 ։ Եգիսթոս ։

Նգիսթոս ’ի մէջ՝ այծաոուն լսի ,
ըստ առասպելաց՝ անկարգ ծընանի .
Որոյ մայրն զնա՝ ձգեալ յանտառի ,
’ի հովուաց կաթամբ՝ այծից սընանի ։

702 ։ Հէպպոլիտոս ։

Նակ Հիպպոլիտոս՝ գոլով ամուրի , [3]
յիւր մօրուէն փիդրայ՝ զըըպարտեէլինի .

1 Սա ըստ բանաստեղծից էր մանուկ գեղեցիկ յոյժ . մինչ զի՝ երբեմն մատուցեալ յաղբիւր ըմպել զջուր՝ հա բաւ ’ի սէր պատկերի իւրոյ , և հիւծեալ փոխեցաւ ’ի ծաղիկ Նարկիզ ։

2 Պարիս էր որդի պրիամոսի արքային որոյացուց , որ ըստ բանաստեղծից ընտրեցաւ ’ի դիոսէ գատաւոր առ որոչելոյ զվէճ երից չաձուհեաց՝ ալլնասայ , հերայ , և ափրոդիտեայ . որք վիճէին ’ի վերայ ոսկի խնձորոյ . զոր ’ի մէջ էարկ յաներևոյթս անխաբնուրէն , վո ոչ առնոյր զնա յընկերուհեէն իւրեանց . յոյր վ գրեալ էր * գեղեցկա ,, գունէն ւէոէ ։։ Յայնժամ պարիս եաս զնիձոյն ափրո գիտեայ (659) . որով և ’ի պարգեւս ընկալաւ ’ի նմանէ զհեղինէ կին մենղաւոսի արքային՝ զհռչակեալն գեղեց կուհէ . յորոյ ’ի պատճառս եղև պատերազմն եղիտնա կան , կի՛ որոյական ’ի ձեռն չնչին անմիաբանուհեէ ։

3 Հիպպոլիտոս որդի Թեսէոսի անգոսնեալ զկանայս ,

Ողով աքսորեալ՝ յօտար աշխարհի,
'ի յերիվարաց՝ իւրոց յօշոտի։

703 Ա֊ Մարսխաս։

Մ'արսխաս փողոր՝ էր փըռւիւգացի,[1]
իշխէ գալ 'ի վէգ՝ ընդ ապողինի.
Ուր գովեաց միգաս՝ ըղնոյն մարսխաս,
որում և իշխ՝ ականջք բուսանի։

704 Ա֊ Եղեռն։

Լղոս դարդանիոյ՝ արքայ էր ասի,
չինեաց բղ՞բոյր՝ քաղաք Հ՞բաշալի.
Երբ ընկէց գիոս՝ զարձան պալաստոյ,
առեալ զայն իղոս՝ կուրացեալ լինի։

705 Ա֊ սաղմնէոս։

Խակ սաղմնէոս՝ եւզոսի որդի,
ցանկացաւ լինել՝ յածոց կարգի.
Գործեալ կայծակունս՝ ըստ արամազդայ,
եղև չանթահար՝ ցասմամբ գիոսի։

706

Սա չինեաց ասեն՝ կամուրջ սըղընձի,
բարձր և լայնանիստ՝ ընդ երկայն ձգի.
Յոր վերայ ըզկառս՝ ընթացուցանէր,
գործէր զորոտմունս՝ ձիովք առհի։

707 Ա֊էր պէոս։

Տիտիոս Հսկայ՝ երկրածին կոչի,
զի ծընեալ ասեն՝ յանյայտ խորշ երկրի.

սերեաց զամուրի կեանս. բայց մերու նորա զրպարտեաց զնա առաջի հօր իւրոյ. իսկ նա գիտացեալ զցաւումն նորա փախեաւ, բայց ապա անիծից հօրն՝ անկեալ 'ի կառացն յօշոտեցաւ յերիվարաց իւրոց։

1 Սա իշխեաց ախոյեան եղանել ընդդէմ ապողինի. որոց գառաւոր կարգեցաւ միգաս արքայ որոշել զլուն. այլ միգաս գովեաց զմարսխաս. Ե որ զայրացեալ ասր-

Ոդի խղասայ՝ ազամեցոնեան.
սերմըն վերածին՝ վերհին դիոսի։

708

Այս իբրև եհաս՝ ի չափ հասակի,
եղև անհեթեթ՝ լեառն լինչ վիթխարի.
Այրք ընկողմաներ՝ ասեն Թէ ընայր,
զինըն արտաչափ՝ հողոյ ըզտեղի։

709

Ի դիպիլ սորա՝ մերն ապողոնի,
Հարուածեալ նետիւ՝ յանդունդս անկանի.
Այնդ ցինք ըզնորա՝ ըզվէրդ կըրծելին,
որում նորանոր՝ լերդք բուսանէին։

710 Այս ՝ ա տալա։

Այտլաս Թագաւոր՝ էր մաւրիտանի,
ծընունդ լեալ երկնից՝ կամ ուռանոսի.
Որ իբրև դըտակ՝ աստղաբաշխութեան,
ըզերովանդակ գունտ՝ երկնից յուսն ունի։

711 Այս պերսեոս։

Պերսէոս ծընունդ՝ դիոսի կոչի,
որում Թևք Թըռչնոց՝ դաշոյն ընծայի.
Որով ըզգըլուխ՝ եհատ մեդուսայ,
այն վրնասակար՝ ժանտ հայեցողի։

712

Վանդն սա ասեն՝ ի հերաց տէզն,
ուներ բիւրաւոր՝ աչըս Թիւնալի.
Վարացուցաներ՝ առ որս հայեր,
զամենայն էակ՝ մարդ և կենդանի։

զոն ասէ. փոխանակ զի այսպէս Թանձրալուր գտաւ
յորշէլ զքաղցրալուրն՝ բուսոյն քեզ ակռանդ իշոյ։

713 Լ՚ պանդոռա ։

Պանդոռա ձայներ՝ այն տիկին նահնի , [1]
որ ՚ի հեփեստեայ՝ ըստեղծեալ կեղծի ։
Նդեալ յամենայն՝ չաստուածոց միջի ,
զանազան ձրիւք՝ յայնց պատուասիրի ։

714

Նրբը ցասեաւ դիոս՝ սփրոմէթէոսի ,
յղեաց զ՚պանդորա՝ պատուհաս երկրի ։
Որ ունէր ՚ի ձեռս՝ անօթ բաղդանոց ,
ելից եղկութիւն՝ ՚ի մէջ աշխարհի ։

715 Մ՚էր որփէոս ։

Ա էհսաջն որփէոս՝ էր թրբրակացի , [2]
անզոյգ քնարահար՝ միակ պանծալի ։
Որ սակրս նէրհուն՝ երաժըշտութեան ,
դիցն ապողոնի՝ որդի համարի ։

716

Ա՚ա երբ հարկանէր՝ զիւրըն տասնաղի ,
յաղթէր համբարուաց՝ ձայնիւ նազելի ։

1 Պանդորա ՚ի մէզ թարգմանի ամենապարգեւ ։ որ էր առաջին ստեղծել կին հեփեստեայ ։ առ հրամանաւ դիոս կացուցեալ ՚ի մէջ դից ունելով զբոլոր զերեսաք՝ մեծապըեցաւ ՚ի նոցանէ ։ իբր զի աթենաս ընծայեաց նմա զիմաստութիւն , ադոդոն զնուագերգութիւն , և հերմէս զսերմաճաբանութիւն , ևն ։ Ա՚յս պանդորա առաքեցաւ ՚ի դիոսէ պատուհաս երկրի վասն յանցանաց պրոմիթէայ (694), կրելով ՚ի ձեռին անօթ ինչ կիր բաղդանոց ։ զոր բացեալ անգիտութեբ եղբայրն պրոմէթէոսի , հիւանդութիւնք և թշուառութիւնք սփռեցան ՚ի վր երկրի ։ որ իբրև ածապարեայ խրել զանօթն՝ եռես զի միայն յոյսն մնացեալ էր ՚ի յատակս անօթոյն ։

2 Բազում առասպելս յօդեցին հնախօսք յաղագս նուագածութեց որփէոսի ։ մինչև զթռչունս և զվայրի էրէս ամոքեալ լսութեան կրթէր , և զսիրտ սանդարամետին քաղցրացուցանէր ։ և նորին աղագաւ քաջք սորա դասեցաւ ՚ի կարգս համաստեղութեց ։

Ջուանիք ոստոստէին՝ և գետք կասկին,
մարդիկ կենդանիք՝ յապուշ կըլլային։

717 Յո՛ւլիոս Գորձեայ։

Ի՛ջ՛ի տարտարոս՝ ըստ առաստպելին,
քաղցրացոյց ըղսիրտ՝ սանդարապետին։
Ո՛զատեաց անտի՝ ըղմեռեալ իւր կին,
գեղգեղ նուագօք՝ անմահ քընարին։

718 Ա՛ղր պերիպոս։

Պերիդոս որդի՝ էր ի քաքսոնի,
էջ՛ի տարտարոս՝ յանյատակ տեղի։
Ո՛յափըշտակել՝ զիւր կին յանդիմդոց,
՛ի կերբերոսէ՝ անգէն սատակի։ (741)

719 Ա՛ղր պեղադէս։

Պիւղադէս սիրով՝ կապեալ ընդ՝ ովբեստի,[1]
անքակ բարեկամ՝ միակ յաշխարհի։
Ո՛ւր՛ի մեռանիլ՝ իւր բարեկամի,
էջ և ովբեստէս՝ ՛ի տարտարոսի։

720 Յո՛ւլիլէ։

Կամիլլէ պարկեշտ՝ ընծայ արտեմի,[2]
՛ի կաթանց ձիոց՝ սընեալ յանտառի։

1 Պիւղադէս որդի աթռոիեայ արքային՝ սիրով կապեալ էր ընդ ովբեստեայ ազաւնիմնեան։ Մինչ զի գոր ծակից էին միմեանց յոյժ։ և եղև ըմբռնիլ ովբեստեայ ընդ պիւղադեսի վն գողանալոյ զանձանն արտեմեայ։ վնիւս էլ՛ի դատաւորէն, զի սպանցի ովբեստէս։ յայնժամ յառաջ մատուցեալ պիւղադէս սկսաւ պնդել՝ թէ ես ինքն եմ մեղապարտ, իսկ ովբեստէս քանզի զի ինքն սպանցի և ընկերն ապրեցի։ և ընդ հակառակն՝ պիւղադէս պնդէր երդմամբ, թէ ինքն է պատժելին։ ընդ այս գործ զարմացեալ դատաւորին արձակեաց զերկոսին ևս։ Այն ևս թէ՝ ի մեռանիլ պիւղադեսի էջ և ովբեստէս ըզ նմին՛ի գժոխս, զի մի՝ ինասցէ յաշխարհն առանց սիրելւոյն։

2 Կամիլլէ էր դուստր մետաբոսի արքային։ զոր ընդ

Որ երագաթռիչ՝ եղև քան զՀողմ,
մինչ անեթաց ոտիւք՝ գընայր ՚ի ծովն։

721 Ն՚ ՀԲՐԻՒ։

Ակերկե էր վհուկ՝ յոյժ հըռչակելի, [1]
դուստր արեգական՝ յաքսունց ձնանչի.
Որ երբ կախարդէր՝ զմարդիկ իւր դեղով,
յանասունն փոխէր՝ ըստ որում կեղծի։

722 Ն՚ ԱՐԵՒԿՈՒՍ։

Արդում զարեւկուս՝ առասպել նախնի, [2]
որ ՚ի կնոջէ՝ յայր սերափոխի,
Ա՚յրականութիւն՝ ունէր և մերուս,
ըստ քանդագուշեալ՝ սըտայօղ վիպի։

723 Ն՚ ՀԲՐԳՆՈՍ։

Ակրգնոս Թագաւոր՝ էր լիգուրացի,
ըստ քանահիւսից՝ ՚ի կարապ փոխի.
Ո՚րանզի փայլեհան՝ երբ անկաւ յերկինից,
սա լալով ընդ քերց՝ փոյթ պատուհասի։

724 Ն՚ ՈՍԲՐԻՍ։

Ոսկ ոսկրիս էր՝ քաջազն անուանի,
չաստուած ոսկրիկոյ՝ համարեալ լինի.

ծնանիլն՝ նուիրեալ արեւմտեայ լինկեցին յանտառս. ուր ՚ի կամենալ երիվարաց անեալ եղև այնչափ երագաթռիչ, մինչև անեթաց ոտիւք անցանէր ասեն ընդ երեսս ծովու։ Սա եկաց ապա ՚ի տան հօր իւրոյ իբր նուիրեալ կուռ. տան. զոր բերեն յօրինակ պարկեշտութեանէ։

1 Ակերկէ դուստր արքային կողկիսայ՝ հինգերորդ արեգակին անուանեալոյ. որ իւրով անխմաստ մոլորութենէն կա. խարգեալ զմիտս մարդկան ախտեցուցանէր զնոսա որպէս զանասունս։

2 Պղինիոս ասէ, թէ տեսաւ յարգիացւոց երկրի ա. րեւկուս ոմն այր, որ յառաջ լեալ էր կին. և յորժամ տուաւ ՚ի կնութիւն՝ նոյն ժամայն մերուսք բռնան ՚ի նա, և էառ իւր կին։ Գ՚էր՛ Ե. գլ. 4։

Որ և սերասելիս՝ համ ապիս կոչի ,
Ծընօղ արուեստից՝ ծընունդ դիտոսի ։

725 Օ ՝ինչ են հիդոտ ։

Սիկղոսք վիճախարի՝ հսկայք ահագին , ։
Ծընունդ սիկիլեայ՝ առ ետնայ լերին .
Իշմեծաքոլոր՝ զակն մի միայն ,
՚ի մէջ ձակատուն՝ իւրեանց ունելին ։

726

Սոքա են դարբինք՝ ըստ առասպելին ,
Գործօղք հեփեստեայ՝ չինօղք կայծակին .
Որոց կերակուր՝ եր միս մարդկային ,
Մարդակերպ գազանք՝ մարդեկ վայրագին ։

727 Լ՚ պողիւֆեմոս ։

Ոսկ պողիւֆեմոս՝ ծ՚ննունդ պոսիդոնի ,
Կիկղոպ զաչացու՝ հերձիչ սոսկալի .
Կալեալ զոդիսևս՝ փակեաց ՚ի յայրին ,
Եկեր և զերկու՝ ընկերըս նորին ։

728

Սակայն ոդիսևս՝ եօտ գինի նմին ,
Կուրացոյց ըզնա՝ ՚ի հուր խանձողին .
Կ՚ռեալ զիւրովի՝ ըզմորթ ոչխարաց ,
Գընայ ընդ խաշանց՝ յայրէ վիրագին ։

729 Ա՚ եր յասոն ։

Յասոն Թեսաղաց՝ արքային որդի ,
Արգոնաւորդաց՝ առաջնորդ կարգի .

1 Սիկղոպք առասպելեալ հսկայք գագաթակնեայք էին նախնի ժողովուրդք սիկիլեոյ . զորոց առացին քաշնատեղիք ունել մի միայն աչն մեծաքոլոր ՚ի ձակատս . զի յոմնական ձայնս գՓՓցջս առուգաբանի բոլորական , կիք չըՀատես : Սոքա ասեն նախ գինն զսպնձագործուԹիւն , և եղեալ արքանեակք հեփեստեայ , համ արաւ մազայ՝ չինէին զկայծակունս ։

Պնայ ընդ նոսա՝ ի կողքիս քաղաք,
Նուաճեալ ըզցուլ՝ ամ ըզգեղմն ոսկի։

730

Ոսղոմ ըզնապար՝ ըզպողնեհիէս, (252)։
զեղբարս հեղինեայ՝ անքակ երկուորիս.
Ոլք և վեր առեալ՝ ի կարգ դիւցազնց,
դասեցան՝ ի թիւ՝ համաստեղութեանց։

731 Օ՜ ինչ են յուշկապարիկք։
Յուշկապարիկք են՝ հրեշ կենդանի,[2]
գիւտ մըտացածին՝ առասպելարկուի.
Կէտն՝ ի ձև մարդոյ՝ կէտն է իբրև ձի,
կամ ցուլ կամ ձուկըն՝ խառնակ կենդանի։

1 Դիտոս երբ փոխեցաւ՝ ի կարապ՝ սիրեցոյ զնմա. յորմէ ասեն եղեն երկու ձուք. յորոց՝ ի միոջէ եղ կապար և պոլիտևկիա կնի պողոքս. և՝ ի միւսոյ եղ հեղինէ քեռն. որք և ձայնեցան Երիասոր (349)։

2 Բազում տեսակք յուշկապարկաց գտանին ըստ ազասպելոց. ոմանք կիսով չափ են՝ ի կերպարանս աղջկան, և կիսով չափ ձկան, կամ այլոց կենդանեաց. որք և կոչին՝ ի մեզ համբոյս, յաբալէդ, և պարիէ։ Պատմէ գաւիթ անյաղթ, թէ՝ ի մեռանիլ Աբայի առասպելեցին մոգք առ՝ ի միմեանս զձայիրամ, թէ գոյ կենդանի մի. որ յար լինելով յարուցանիէ զԱբայ. և կոչի յաբալէդ։ Ոմանք են կիսով չափ՝ ի կերպարանս մարդոյ, և կիսով չափ այծու. որք կոչին այդեմարդ, եղջերապտաղ, և. ոմանք՝ ի ձև ձիոյ, կամ ի ցլոյ, որք ջիաոյու կամ ֆաուալ ձայնին. յորոց մի էր և նեստոս կենտաւրոս, որ յափշտակեալ զդուստր արքային Եւռղայնոյ՝ կամէր փախչել, եհար զնա նեափւք հերակլէս, որ նեղէր առ գառնուքեն ցաւոցն, և ետ նմա սակս զարհուրանաթեան հանդերձս իբր երբև յիշատակ. որով կկղեալ հեբակլէս, մինչդեռ այրէր արկ զինքն՝ ի գետ և ջերմացոյց զնուրն. յորմէ եղեն ջերմաջուրք իմ առասպելոյ։ ի սոցանէ էր և քիրոն ձիացուլ (667), որ գասել՝ ի կարգս համաստեղութեց կոչեցաւ աղեղնաւոր (349)։

732

Սոքա 'ի յատակ՝ ծովու քրնակէն,
ըստ ունայնախօս՝ առասպելողին.
Որք տեսեալ զնաւ՝ ձայնեն յերգերին,
կախարդեալ զմարդ՝ 'ի յատակ տանէն։

733 Յաւէրժահարսունք։

Յաւէրժահարսունք՝ յաւէրժ բերկրալի, [1]
են յաստուածուհիք՝ վայրաց զուարճալի.
Ցետոց անտառաց՝ և աղբերականց,
այլև հարսանեաց՝ և խըրոխտութեանց։

734 Պռնոմա։

Յակ պռնոմա էր՝ 'ի սոցունց սակի, [2]
պտղոց և ծառոց՝ մեծ չաստուածուհի.

1 Սոքա ըստ բանաստեղծից դտեր քը դոլով ովկիանոս՝ համարին չաստուածուհիք խրախուտեց, հովտաց, և ա մենայն զուարճալի տեղեաց. յորոց ոմանք իշխէին ջրոց, ծովու, գետոց են, ոմանք անտառաց, լերանց, և հովտաց: Իբր զի՝ սոքա յորժամ էին 'ի կեանս՝ սիրէին ասեն զզուարճալի վայրս, և զքաղքի հովիտս. նմին իբր և 'ի մեռանիլն՝ հոգիք նոցա եղեալ յաւէրժահարսունք, յաւէրժ զուարճանան յայնպիսի տեղիս. զորս ոմանք յանմիտ պատաւանից կոչէն դպէ պաչինեբը: Քանզի նախնիք մեր ասէին թէ նոյ ունէր զորդի ի մի նախիան անուն, և գուսուր մի ասպղի անուն, երբ եհատց ած թէ գան այլ ծնունդք. նոյ պահէր զսուտ ասաց թէ ոչ. և սոքա անդէն անհետ ուղեցան, և յանեւրևոյթս բազմացան, ըստ որում յիշէ և գաւիթ անյաղթ: Ասէ էն դանիքնախ. որք ըստ բանաստեղծից էին 50 գաստերք դանայոսի, որք վ՚ սպանուեթէ արանց իւրեանց 50 եղբարց, գաստասպարտեցան 'ի դից 'ի գժոխս. որոց պատիժ էր ընտլ զջակ կարաս մի. որ է նմանուեթէ մշանչևնաւոր տանջանաց:

2 Սա էր մի 'ի յաւէրժահարսանց իշխող պտղոց և պրաղաբերը ծառոց: Նմանապէս և աբյագանգն էր ասեն մի 'ի յաւէրժահարսանց, որ առ չատնսուսուեթէ պատժեալ

Որոյ և արձան՝ դրօշեալ էր կին,
Նըստեալ 'ի կողով՝ պատուղ 'ի ձեռին։

735 Ն՝ոյ սիճնիգա։

Ա՛րդ սիճնիգա էր՝ կին Թագաւորի, [1]
փոխի 'ի ձիւաղ՝ խաւարն կենդանի.
Ա՛ռիւծանըման՝ Թևաւոր վիշապ,
ուտէր զանցաւորս՝ դարանեալ յայրի։

736 Ն՝ ելբրա։

Ծանր ըզփրլօրա՝ որ կանաչ կոչի,
Ծաղկանց՝ գալարուց՝ էր յաստուածուհի.
Որ և դրօշիւր՝ կին ծաղկապսակ,
'ի ձեռին ունէր՝ կողով ծաղկալի։

737 Օ՝ քնէ են հարպայ։

Խոկ հարպայք էին՝ Թըռչունք վայրենի, [2]
կոչէին դըստերք՝ Ծովու յամաքի.
Որք գողով նըմանն՝ հիւծեալ սին աղջկանց,
ուտէին զամէն՝ որ կայր յաշխարհի։

'ի հերայ, և արհամարհեալ 'ի նարկիսայ՝ ծիւրեալով մանչեցաւ, և ապա փոխեցաւ 'ի քար, որ առ ցաւոցն ձայնէ. զի ոչ այլ ինչ գտանի 'ի նմա ասել, բայց միայն ձայն։

1 Սա էր կին կազմեալ. որ սակս յանցանաց ինչ ասէն փոխեցեալ 'ի խաւն կենդանի առիւծակերպ վիշապ, տուաւ և Թևաւոր. և դարանեալ յայրի՝ անցաւորաց ուսոյն դնէր առեղծուածս խրթինս. որոց 'ի չվարելն լուծանէր, ձգէր զնոսա տատմէն յորջ իւր, և յօշոտէր. զոր սպան եդեալս։

2 Հարպայք 'ի մեղ կոչին չեչպաՒնչ. որք էին ասեն Թռչունք անյայք 'ի կերակրոց, գողով 'ի կերպարանս աղջկանց հիւծելոց 'ի սուէ. ծախէին զամենայն և պատՀաուէին սով մեծ ուր և հասանէին, յոր միանգամ հպէին՝ պղծէին գարշ հոտով, և լափէին զամենայն. որչափ ոք վանէր զնոսա, նոքա անդրէն դառնային։

738 Յ՚ հետբա։

Ողորմ ըզհետբա՝ վիշապ ջըլայլն ,[1]
օձ եօթնագլխեան՝ ըստ առասպելին .
Որոց մի գըլուխ՝ իբրև հատաներ ,
՚ի տեղն նորա՝ այլք բուսանէին ։

739

Զաջն հերակլէս՝ սըմա հանդիպի ,
վըտանգէ ըզնա՝ ՚ի սայր սուսերի .
Յօգնութիւն հիդրայ՝ առաքէ հերա ,
ըզխեցգետին մի՝ ՚ի լըճէ անտի ։

740 Օ՚ն էր հերբերոս ։

Կերբերոս էր մեծ՝ շուն եռագըլխի ,[2]
դըրանց դըժոխոց՝ պահապան կարգի .
Ընդունել սիրով՝ զհկաւլս անգամօր ,
և՝ չըտալ բընաւ՝ զելս ելոյզի ։

741

Սա ըսպանանէ՝ զպերիդոն արի , (718)
որ հաներ անտի՝ զղուսորը դիւոսի .
Ա՚յլ ՚ի հերակլէ՝ նուաճեալ լինի ,
կրկին շղթայիւք՝ կըրծկնակի կապի ։

742 Յ՚ գինէ սոխ-գեան լէճ ։

Ըստիւգեան լճէն է՝ լուալեաց տեղի ,[3]
կամ՝ տարտարոսեան՝ գետ ինչ դարչելի .

1 Ողորմոս ասէ *առասպելէ՝ եղև գազան ինչ ՚ի (լճէն) ,, ձերմէ գոլով յիսունգլխի , և այլք ասեն իննագլխի՝ ,, զգլուխան օձի ցօդացնելով . զոր եկեր հերակլէս սպան ։ զոր և գաւաժց հերա ՚ի կարգս համասատեղուեց ըստ ինչգեաց՝ նին առաքելոյ յօգնուն հիդրայի . զոր սպան հերակլէս ։

2 Այլն այս էր գազան եռագլխի՝ կարգեր ՚ի պղուտոս՝ նէ պահապան գրանց դժոխոց , որ սիրով ընդունէր զհկէնն ՚ի ներքս . և որք կամէին ելանել , կլաներ զնոսա , որպէս ասեն առասպելարկուք ։

3 Բանաստեղծք՝ ստիւգեան լճէ կոչեն զտարտարոս

Որ յառաջ էր մայր՝ լերնեան հիդրայի,
կամ դուստրը ծովու՝ որ 'ի լիճ փոխի։

743 Ա՛ռ պարպարոն։

Ոսկ տարտարոն է՝ ըստ բանաստեղծին,
տեղի դառնութեանց՝ յաւէտ վըշտագին.
Արգելաւ պատրաստեալ՝ վճռագործաց,
յոր ամենայն ինչ՝ վըշտաբեր նոցին։

744

Ա՛ը շտաբեր է ջուր՝ ամենալեղին,
վըշտաբեր տեսիլ՝ մըրիկ և խաւարին.
Ա՛ը շտաբեր է ցուրտ՝ ջերմըմէն դառնագին,
վըշտաբեր ընկերք՝ պահ՛նակք մահածին։

745 Վա՛յ անդ մահ։

Ոսկայն չիք անդ մահ՝ կամ թողլ ինչ ելին,
որ ոձրագործաց՝ էր համբուրելին.
Ա՛յլ միշտ կեանք և մահ՝ 'ի մի լըծորդին,
կենդանի մեռեալ՝ մեռեալ չարչարին։

սեան լուսալիքն ամենալեղի, հաւաքեալ 'ի ժահրից, և յարտասուաց դառնապարտելոց. որ յառաջն էր սեան դուստր ովկիանոսի, և ապա փոխեցաւ 'ի լիճ. որոյ ջուր ըստ ասից նոցա մռնանալ տայ մարդոյ զանցեալսն, ոչ և ապալն գեա։ Յորժամ դիք երդնուին յանուն սուիւ գեան լճի, այլ ոչ և կարէին յետս կալ։ Կաւազաւար այսր լճի էր փոքունդ որդի գիշերոյ, որ անցուցանէր զհոգիս մեռելոց ընդ այս լիճ նաւու, և ասեն՝ 'ի գժոխս, կամ 'ի տարտարոս։

1 Տարտարոսն նշանակէ աղմուկ. որ է տեղի ամենայն դառն տանջանաց. որոյ իշխան է պղտուտն (636). և իսիաս գաւազորք հաւագանդ, էաոս, և ֆնեոս որդիք գիոսի. յորում է նիֆեոս գետ ցո աղբ. և փլեգեդոն գետ հրային, որոյ ալիք են բոց հրոյ։ Ասա մտանեն ամենայն չարագործք, և գաւազաւարանն յաւիտենական պատժով. ոյր էաոն գահավիժեալ 'ի գժոխս գարձուցաներ հանապազ զանիւ մի։ Սիսիֆոս գոլ գլորէ սասեն զվէմ

746 Օ ինչ է պաշտն եղէսաեան։
Ոսկ դաչտ եղիւսեան՝ վայր զուարթագին,
գեղազուարճ տեղի՝ նմանեալ դրախտին.
Ալարդեցաւ ի դից՝ վասն առաքինեաց,
յաւերժանալ անդ՝ ի յաւիտեանին։

747
Հեշտալն ջրքնաղ՝ բղխաւք ի նըմին,
հեշտալն ծաղկանց՝ տեսիլ հեշտածին.
Հեշտալն խոխոջք՝ ջրոյց և գետին,
հեշտալն պտուղք՝ ծառոց պըտղածին։

748
Ո՛հ այս հաւատ՝ առասպելողին,
գրեալ դրօշեալ՝ ի սիրտ և յոգին.
Ո՛րդարոց հանգիստ՝ մեղաց պատուհաս,
մին՝ ի տարտարոս՝ միւս՝ ի դրբախտին։

749
Վեղեցիկ հանճար՝ դատողականին,
Ճըշգըբիտ դասիլ՝ ետ դիցամոլին.
Լռեա քնաւն էր՝ կեղծիք յայս մասին,
սակայն այս անշուշտ՝ հաւատ բընածին։

750
Որով շատացեալ՝ դատողականն իմ,[1]
կասեաց զիմ գրիչ՝ մընալ ի սրմին.
Ո՛ի այլ խուզարկու՝ լինել սընոտեաց,
մի՛ յայտնել զամենի՝ դարուց առաջին։

մի՛ ի գրի անդ, և հանէ մինչև ի բերան գրչին, և ան դէն գլորի ի վայր. որով ցուցանեն զնչանակեցաւորութեի պատժոց։

1 Շատ է արդ, զոր հաստատել կամք եղեն մեզ ոչ ուսուցանել կամելով զկրօնս կատմոլ հերձանուատց, այլ առ ի հմուտ առնել զուսումնասէրս մեր. զի եթէ հան դիպեացեն ի գիրս ինչ այսպիսի անուանց, մի՛ մնասցեն

751

Սակայն վէրծանօղ՝ դու այսըր մասին,
մի՛ սոսկ զարմանար՝ ծաղրեալ զանտեղին.
Ա՛յլ զեռանգն հոգւոյն՝ վառեա՛ ի սրբտին,
զայծ ձկմարիտ՝ պաշտել ջերմագին։

752

Օ՛ի դու ոչ ելեր՝ ի խընդիր նըմին,
ոչ գտեր զնա՝ նատեալգ՝ ի մըթին.
Ա՛ստ ել՝ ի խընդիր՝ նա եգիտ ըզքեզ,
գընեալ վարդագոյն՝ արեամբ Թանկագին։

753

Ո՛վ ամենագութ՝ սիրոյ արարչին,
որ չէթող ըզմարգ՝ պաշտել զնոտին.
Ա՛յլ՝ ի լոյս էած՝ պաշտել զպաշտելին,
մընալ ընդ նմա՝ ի փառս անձառին։

անչմուտ և անգէտ. թէզ զի այն անուանք հարկաւոր են յոյժ՝ ի բանաստեղծութեն։

ՄԱՄԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ

ՏՆԿԱԲՆԱՒԹԻՒՆ

754 . Օ՜ինչ է պատմին ։

Տունկն աձեցուն բոյս՝ իբրև կիտղանին, [1]
ունի գործարանս՝ որով հիւթք բաշխին.
Կ՚ելևայլ մասունք՝ ծուծ միս թել և մաշկք,
կիղև և ոտիք՝ զննին՝ ի նմին ։

755 Այս՝ չինչ ոգիս ։

Ոգիքն կ նուրբ օդ՝ իբրև գոլորշի, [2]
ընդ բոլոր մասունս՝ տընկոց ծաւալի.
Որ տընկական ոյժ՝ ի թաղսըն զօղեալ,
աձեցուցանէ՝ ի չափ հասակի ։

1 Տունկն է բոյս, որ գալարի և աճի ՚ի ձեռն գործարանաց կամ անօթոց իւրոց. որովք զաճողական զօրուն, կամ զննդարար հիւթս քաշէ յիւրաքանչիւր մասունս իւր։ Նմին իրի պիտք ասին ունել անկական կեանս, որք ՚ի ներքուստ անանին և աճին. հիւթոցն խաղացմամբ, և գնահանիս իւրեանց ծնանին. իսկ զննդարար հիւթս ընդունին քան մեծ մասին ՚ի ջուց. յորում խառն են քանզում հողային, կամ անխային մասունք, որով անանին. որպս և փորձն ցուցանէ. քանզի վերեկրնկոիս բնաջրն նին ցամաքեցուցեալ չհոտն կրնաց. և ապա անկեաց ՚ի նմա զուարճ մի տ լիարկ ծանրութիւ. զոր և ուռոգանէր անձրևաջրով առեալ ՚ի մէջ կապարեայ անօթոյ։ Ապա գինի տ ամաց հանեալ զծառն՝ կրնաց, և ահա գտաւ ծառ 169 լիարկ հանդերձ տերևովք. իսկ հոգն պակասեալ էր 2 ունկի և կէս։

2 Ոգիք կոչի քան անկաբանից նուրբ և չնչելի դոյա-

756 Ա՚ հեւ՚ն ։

Ասկ հիւթն է խոնաւ՝ արեան նըմանի , ։
Ձնապաղն ՚ի բոյս՝ որով մնանի .
Որ ՚է պէսպէս տունկ՝ այլևայլ լինին ,
յոմին կաթնորակ՝ յոմին խաժային ։

757 Ա՚ դան ։

Ումն է թանձրը մսան՝ անողականին , ։
յորմէ ձիւղք ուղիշ՚բուն արմատք թունձրին ։
Յոմանս է փափկիկ՝ և յոմանըս պինդ ,
փափկիկն ՚ի դալարս՝ պինդ է միս ծառին ։

758 Ա՚ ընկ ։

Ընդ թիւքն են երկայն՝ մասունք դալարին , ։
նըմանն երակաց՝ ձըգին տարածին .
Ումանք են զերթ ջիլ՝ ոմանք խողովակ ,
ջըլոք այլևայլ՝ ձիւղք յօդին կապին ։

յուրեին , զոր տունկք չնչեն իբր զօդ ՚ի ծակուեաց իւր եանց . որ և սիրեալ ըստ ամենայն մասունս անկոց՝ տայ նոցա զանձողական զօրութեին ։

1 Հիւթն է խոնաւութիւն ձգեալ յարմատոց անտի ընդ մարմին անկոց . որ ոչ է սոսկ ջուր . այլ խառնեալ ՚ի լուծեալ մասնկունս , որք են աղային , իւղային , ձիւթային , հողային , և ն . որք ծծեալ ՚ի հողոյ և յօդոյ ըստ բարանաց ծակախս անկոց՝ շրջանառ լին ՚ի վեր և ՚ի վայր ընթացան . մինչև հուսկ յետոյ փոխին ՚ի փայտ . որպէս արիւն կենդանեաց ՚ի միս . և յայն սակս ըստ պէսպիսութեէ անկոց պէսպէս լինին հիւթք ։ Խորն զի յորին է ջրային , որ հոսէ ՚ի գարնան . ՚ի թգենիս՝ է կաթնորակ . յընկնիս՝ իւղային , յորմէ լինի ուտին . ՚ի կեռասենիս՝ խաժային . յորմէ լինի խէժ ՚ի ծառս , ևն ։

2 Միան է թանձրագոյն մասն անկոց . յորմէ ձիւղք և ուղիշք երկայնին . որ ՚ի դալարիս և ՚ի պտուղս լինի փափկիկ , իսկ ՚ի ծառս՝ պինդագոյ . և սա կոչի փայտ ։

3 Թելքն են երկայնաձիգ մասունք սերոք , զոր յօգեն զպէսպէս մասունս անկոց ընդ միմեանս ու ՚ի հաստատուն . յորոց ոմանք կարծր են ջիլ կոչեցեալք . և ոմանք

759

Լսակ խողովակօք՝ հիւթք յերկրի՝ ծըծկին,
եփեալ՝ ի նոսա՝ յոսոցս Ճապաղին.
Որով բոյսք կեցեալ՝ աճին սըննանին,
յորոց պակասիլ՝ անդէն ցամաքին։

760 Յա- արմատն։

Ըրմատ բերանով՝ նըմանն գտանի,[1]
զի ծածկեալ՝ ի հող՝ ծըծկ զհիւթ երկրի.
Ի ձեռն հերասանծ՝ թելից նուրբ երկայն,
ձըգեմ դեպ՝ ի բուն՝ հիւթ սընընդակայն։

761 Յո- բուսն։

Բուսն՝ ի մանրատունկս՝ ծըղօթ անուանի,[2]
որ հողոյ՝ ի վեր՝ ամբարձեալ լինի.
Յոր սընընդարար՝ հիւթըն հաւաքեալ,
յայլևայլ մասունս՝ անտի բաժանի։

եթէ խողովակք. ըստ որս հիւթն Ճապաղի ըստ մարմին անկոց. որ և կոչի Նարէբաւի։

1 Արմատն է գլխաւոր մասն անկոցն, որ ծածկել ըստ հողով ձգէ զհիւթն անդադար՝ ի ձեռն խողովակաց կամ անօթոց իւրոց. որոց կազմուելն երևի յարմատն օշինդրն և զնել խոշորացուցիւ. Զոր ձե. ուրա և մաշկն արտաքին. և անտի մինչև՝ ի բն ձգի կեղևն. յոր են մանրեբրակք կամ անօթք. և անտի մինչև ցկեդրոն արմատոյն է փայտ. որոյ մի մասն է փայտեղէն նը. և միւսն ըստ ուղղութ դծ. յորս են երակք, կամ անօթք ---դբն։ Ասյս անօթք ծծեն զհիւթն յերկրէ. որ՝ ի մաշկն զատ՝ անցանեն՝ ի միոյ անօթոյ յայլ, և անտի տարածի՝ ի մասունս. որով աճի տունկն տրձակելով ոստս, տերևս, ծաղկիս և ն։

2 Բունն կամ ծղօտն է այն մասն, որ՝ ի հողոյ արտաքս հանեալ ձգի՝ ի վեր ոչ շատ. յոր գայ և հաւաքի հիւթն յարմատոյ անտի. ուրանօր եփեալ ծաւալի ամպս յայլ մասունս անկոց։ Եթէ անօթք ուղղաձիգ տրամադրեալ գտանին՝ ասելի երկայն լինի ծառն, այլ ոչ այնչափ հաստ. իսկ եթէ՝ ի չեզ ձգին անկնեալ՝ ի կեդրոնէ ծառոյն՝ ասելի հաստ լինի, այլ ոչ երկայն։

762 Յաւ ծուծն։

Ծուծն է գոյացեալ՝ ի տընկամիջի, [1]
Իբրև սիրտ ուղիղ՝ ոգեաց է աեղի.
Որով քան զայլ մասն՝ ընտիր գըտանի,
Զի է օթևարան՝ հիւթոց ոգելի։

763 Օ ջիղ է հեղեղն։

Կեղևն է ըզգեստ՝ ծածկօղ զմիս տնկին, [2]
Որով անվընաս՝ մընայ ի բացին.
Որ և է կըրկին՝ ներքին արտաքին,
Ներքին մաշկակերպ՝ թերթի վերակոչին։

764 Յաւ փերեն։

Տերև կամ սաղարթ՝ կանաչ գալարի, [3]
Լի մանրերակօք՝ հիւթոյ փափկալի.
Որոց գոյն և ձև՝ միմեանց անընդմանի,
Տուեալ է պըտղոց՝ ի զարդ և պաշտպան։

1 Ծուծն է փափուկ մասն փակեալ՝ ի տնկամիջն իբրև սիրտ և բնակարան ոգեաց. որ յոմանս է սպիտակին, յոմանս մանր, որպէս յորթն. յոմանս խստասկինդ, որպէս ի ձմենին. և յոմանս նոյն ըստ փայտի, որպէս յոսպնիազն։ Յառաջնին ասի ծննդեան տնկոյ՝ հիւթն սննդական եղեալ նէ ի ծուծն, և անտի ապա սերտեալ գնայ ի փայտ։

2 Կեղևն է իբրև զմարթ բաժանեալ ի բազում կուղս. որոց արտաքին կուղն է թանձրագոյն ևղեալ առ ձգտեալ. իսկ ներքինն մաշկակերպ կառուցեալ ի տուընկին, որ կոչի ընբլի. զոր ի հնումն ի գործ ածէին ի տեղի թղթոյ։ Կեղևն մնանի ի ջրալից հում մասանց հիւթոյ։

3 Տերևն ոչ միայն է ի զարդ, այլև ի պահպանութիւն տնկոյ. մինչ զի առանց տերևոց ոչ մարթի տուընկին հասանել ի կատարեալութիւն. որոց պէսպիսութիւն ձևոց և գունոց սքանչելի է յոյժ. զի յանհամար բազմանէ տնկոյ չիք գտանել նոյնագոյն և նոյնաձև՝ երկու տերևս. ուր ոմանք կցեալ են ի բուն տնկոյն, որպէս ի կաղաքայսս. ոմանք կանթեղս կախեալ, որպէս յորթն. ոմանք երկայնաձիգ. ոմանք բոլորչի. ոմանք խայթոցաւոր. այլք առանիւաւոր, ևն։ Ըստ տուընկաց՝ որոց փափուկ է պտուղն, լայնա-

765 [1]։ Ծաղկին։

Ծաղկին է պարծանք՝ զարդ ըսքանչելի,
Երփներանգ փթթեալ ի բոյս դալարի.
Բարեբեր բացեալ՝ ի գեղ պանծալի,
Հոտով և գունով՝ ձոխացեալ պըճնի։

766 [2]։ պտուղն։

Պըտուղն է հասեղ՝ մասըն ցանկալի,
Ի ծաղկիլ սընկոց՝ յուշիկ արտադրի.

սաղարթ են, որպէս թզենին և որթն. զի պատպարեա-
ցեն յանձրևաց և ի տապոյ զպտուղս. իսկ որոց խիտ են
պտուղք՝ անօսր և մանր, որպէս նշենին։

1 Ծաղկին արձակեալ ի կոնոնիկ իւրոց փթթիթ երփ-
նազարդ գունով և հոտով. որոց ոմանք կոչեն պտղ,
ոմանք ևգ. և այլք պտղեգ. արուն ունի ասեն ի գագա-
իւր մանրատալ ալևւր ինչ, իբրև սագին. իսկ էգն ունի
ի ծաղկան միայն ծիլ և տպի. որ առեալ ի գագս զա-
լևւր պրուին՝ բերի զպտուղ. ոչ էգ արմատենին սաղար-
թիւքն բերի յարտ արմատենին. որով և ազգմամբ պրտ-
պտբերի. պտս թէ ոչ ինոյ անպտուղ. սակայն մեծ մասն
անկոց գոլով արուէգ, ինքնին խրտնց զօրութ պտղա-
բերին. ոմ չուշան, որոյ միջին թիւք ծաղկան երբ բա-
ցեալ լինին, թափեն զալևւրն ի ներքին մասն, յորում
բեղմնաւորի սերմն. նմին իրի որք ունին ծաղկս առանց
սանդխտառան ոչ բերեն զպտուղ. և յորժամ ծիլն կծկի
ի ցրտոյ և ի տապոյ՝ ոչ հասուննան պտուղք։ Սակայն
են և բազում տունկք, որոց պտուղք ոչ հասուննան.
եթէ ոչ փոքրիկ ճանճք ինչ մուցեն ի միջն ծաղկանց,
կամ պտղոց. որ թռուղն (լծ խնձոր) ոչ հասուննայ, եթէ
ոչ փոքրիկ ճանճք ինչ եղևսլք ի ժանտաթեզս մուցեն ընդ
քթիթն ի ներքս։ Ի սոյն պէտս՝ թերևս բազում որդունք,
կամ ճանճք դոյաւորին ի պտուղս ծառոց, ոմ սեռանեմք՝
որ կամ պղնաւակար հնեթս պտղոց սպառեն, և կամ բնա-
կան զօրութիւն ինն բեղմնաւորեն զայնս, որով հասուն-
նան պտուղք (846)։

2 Պտուղն է բնական մասն անկոց, որ արտադրի ի
փթթիթ կոկոնից՝ անեալ անտի ոմ մանուկ ի սաւանդ.
սա յոմանս է հատ մրգ, ոմ խաղող. յոմանս փեղկեա-

Յորչափ կայ 'ի քոյս՝ անտի սընանիլ,
և բազում անգամ 'ի պատեան փակիլ։

767 Օ՛ինչ է աբրն։

Ամբոխն վերջին մանն՝ է բուսականին,
ընկիզն և վախճան՝ կատարիչ նըմին.
Օ՛երթ ալըսակ փառաց՝ եդեալ 'ի գըլխին,
որով և տեսակք՝ տընկոց պահպանին։

ւոր, ոչ նուշն. և յոմանս պատենաւոր, ոչ ցորեան։ Պտուղն զտեալ յինքեան զհիւթն՝ պարարէ զանբրին. և միանգամայն կարգի 'ի կերակուր մարդոյ և կենդանեաց՝ տալով նոցա զիմափուկ սնունդ։ Ասաի պիտոյք ոչ են պատուղք, այլ այսուհետ ինչ, յորս ուռնուն մանրաթելք Ծառոց խոցոտելոց 'ի խայթոցաց Ճանճից (846)։ Խայտ գիտելի է, զի բազում անգամ տեսակք պտղոց փոփոխին 'ի պատճառս անդաբար հիւթոց. որ ցորեանն երբեմն փոխի յորոմն, և գարին 'ի վարսակ, առ 'ի չգոյէ սեպհական հիւթոց. վասն զի փափուկ գործարան մանրաթանկոյն կծկեալ կիմ շարձակեալ ձգէ զօտար հիւթս, և բեղմնաւորի օտար պտղով։

1 Աբրն արտադրի 'ի զտեալ մասանց հիւթոց. յոր 'ի վերջոյ ձգի անկական զօրութիւնն. որոյ ընաթր և ոգելից ման փակի 'ի կեդրոնի երբև խիւս կամ սաղմն. յորմէ արտադրի տունկն. իսկ խոշոր մասն հիւթոց փաթուածեալ զսյն երբ պահարան սերմանն։ Աւրդ բնաշինիւք սնդեան նախ՝ քան զամ տունկք արտադրին 'ի սերմանէ. երկրորդ՝ քան զամ տունկք յառաջ քան զբուսանիլն պարունակեն յինքեանս զբոլոր տունկն հանդերձ ամ մասամբք. ըստ որում ցուցանեն և խոշորացոյցք. յոր երբև զարթնոյ անկական զօրութիւնն, զսրմանալի իմն կարգաւ աճեցուցանէ զմասունս. ար ա, բ, Ձ. ձէ. են երկու բլթակք բակլայի միացեալք 'ի ձեռն թելոյ. յորս տեսանի սաեղծաւորութիւն իմն ..... ուր սրմանք սերման են գգ. որք Ճապաղեալ ըստ ամ մասունս բակլայի մնուցանեն. իսկ փոքրիկ ընձիւղն կիմ արմատն բ իջանէ 'ի հող և տարաձեալ զմասունս ձգէ յերկրէ զհիւթն սննդարար. ապա արտադրէ զընձիւղն է, և յետոյ զտերևս, որով լինի տունկ։

768

Ողջո՛ւմ զայլևայլ՝ մասունս պիտանի, [1]
Ըզևիղը ըզպատեան՝ փուշ ընդ փեձեկի.
Ամանք իբր ոսկր են՝ որպէս յընկուզին,
Ամանք վերթ մագիլ՝ իբր ի բաղեղին։

769

Ա՛յս ամէն մասունք՝ աձողականին,
Կազմեն բոլորեն՝ ըզդեղ դալարին.
Որովք մնանին՝ ածին բարձրանան,
Ի թուփ և ի տունկ՝ ի ծառ ձևանան։

770 Այս հեանդուածք։

Լակ հիւանդութիւնք՝ տընկոց պատճառին, [2]
Ի բազում առթից՝ որովք վըտանգին.
Ա՛ւելորդ հիւթովք՝ յըրտիւ և ջերմամբ,
Հարուածով զեռնոց՝ օրհասաւ բնութեան։

1 Ա՛յս մասունք կոչին ծառայական. իբր զի՝ ծառայ են յօգուտ մնկոց. որպէս խիղքք ձգեալ գնեչակաք՝ վերամբարձ ունին զորթն. փուշք պահպանեն զվարդն ի չհասակաւ զեռնոց. և պատեանք պաշտպանեն ըզպտուղս, և՝ն։

2 Բազում են յայժ առիթք հիւանդութեանց մնկոց. ի տեւելոյ ափսեալ, խորշակահարութեան, որով կիզուն դեղ ռաբակ պակուցք, ցրտահարութեան, փտութեան կիմ քայց կեղ, որ հարկանի ի տունկս առ արմատիք. թոյզ զվաթ տար արամադրութեաս արմատոց, վնասուածս և զձիս։ Լակ մահ կիմ ցամաքութեան մնկոց պատճառի յորժամ խցանին անօթք ոչ կարելով ընդունել զհիւթս, կամ յորժամ երկարութեամբ կենաց շնչանի մնկական զօրութեանն, չկարեն լով ձգել և մարսել զհիւթն ի մնացեալ իւր։ Գոյ ի տունկս ձգողական ինն զօրութեանց համաչափ ձայնեալ. որով վարկանեմք մասչին ի ջուր, և խորչին յիւղոյ. դարձեալ և որթն գիմ ի ջուր և խորչն ի կալամբէ։ Ա՛յս խոր շութիւն կոչի համաչափութիւն։

771 Վանէ են պեսակ պնկոց։
Ա՛րդ տեսակք տընկոց՝ բազում գտանին, [1]
՚ի տընկաբանից՝ յերկուս վերածին.
Ոմանք անկապաք՝ ոմանք կապաբեալ,
անկատարք են տունկք՝ որք զարմատ չունին։

772
Լսկ կատարեալքն են՝ որք զարմատս ունին, [2]
ըզբուն ըզկեղև՝ զոստ ընդ ուղեղին.
Լա՛ս սոցա երեք՝ տեսակք գլտանին,
ծառ սաղարթալի՝ ևռւթ և թալաբին։

773 Օ՛ղնէ է թալաբին։
Թալաբին է տունկ՝ դալար և անբուն, [3]
որոյ են անբաւ՝ տեսակք գումագոյն.

1 Ա՛յժմեան անկաբանք զհետ եղեն զտեսակս անկոց ըստ թուով արկանելոյ. բայց որովհետև ոչ ոք մարթացաւ ցարդ յայմ լերինս Տաց գնալ և քննել, (թող կ՚ևնոր տեղիք հետ գհետ գտանին,) նմին երի օրըստօրէ տեսակք անկոց ստա՛ էելոյն. իսկ զորս մինչև ցայժմ գտին՝ իբր առ ոչինչ համարին նկատմամբ բազմ անծայնօթ Տաց. քանզի անկաբանք 43,000 տեսակս անկոց հաղիւ գիտացին որոշել ցարգ։

2 Կատարեալ տունկք ունին գործարանս, արմատս, տերևս ևն. յորոց ոմանք կարգին ՚ի դեղ. ոմանք ՚ի կերակուր. ոմանք ՚ի ներկ. ոմանք ՚ի զարդ, ևն. իսկ անկատարք են, որք չունին կատարեալ արմատս, կամ այլ մասունս, որպիսի են ասեղն անարմատք. որ ծնանին ՚ի մարմին անկոց այլևայլ մասանց երկրի, որոց հանդիպին ընդ հողով, ուրանօր նախ ելանէ բուն ինչ՝ իբր խուրձ ջղաց, և ածէալ ձևանայ գլուխ. յորում է միս ըստ հին թով։ Զնոյն է ասելի և յաղագս բէբեսաց, որք են կուտակումն մասանց ՚ի գուրս ելելոց ՚ի վտեալ մարմնոց. Թէպէտ խոշորացուցիւ իբրև տունկ ինչ երևին ունելով գոյնս և սերմն։ Թող զՀնասն բոյսն անարմատ նրբաթել. որ հատմամբ Թելից բազմանայ, և լինի ՚ի ջուր. ոմն է և կանաչ բոյսն ՚ի յատակս լճից. ըստ այսմ է և ջա, կամ ձմառա, որ լինի և ա՛ի վը քարանց։

3 Թալաբի ձայնեմք զմեծ տեսակս խոտոց, սերմա-

Լը՛ր անուշահոտ՝ ծաղիկք զանազան,
եղէգն և բանջար՝ վարունկ և ցորեան։

774 Լա՛ նուռնուճարն։

Ոչ ոյսըն նուռնուճար՝ ՚ի ջուրըն աձի, [1]
արմատն ՚ի բաղում՝ ոսոր ցաւ բաժանի.
Ոչ ոյ զօրութիւն՝ ե զարմանալի,
կակղէ ըզպղինձ՝ իբր ՚ի հալոցի։

775 Օ՛ձինէ նուռն։

Ծ՛ուփն ե տունկ փոքրիկ՝ բնովք բազմազան, [2]
յարմատոց ՚ի վեր՝ ոչ յոյժ բարձրանան.
Ոչ սակաս մարեւոին՝ նաև վարդենին,
տօսաս և դրժենիկ՝ այլև մշրտենին։

Ինձ, բանջարեղինաց, եղէղինաց, ևն. որոց ոմանք կալ. պետ են ՚ի պէս պէս կերակուց, ոմանք ՚ի դեղ բժշկութեան. և ոմանք ՚ի փափկութեան։ Պարտեալ են որ պահանջեն զգուշութեան, և են որ անգուշութեն բուսանին ՚ի լերինս և ՚ի դաշտս. են որ առ եզերք ծովու բուսանին ոչ պրտու ծովային. և են որ ՚ի խոր ծովու. ոչ է տեսակ ինչ սիզոյ, որ ելանէ մինչև յերեսս ծովու՝ մարգագետնի նմանութիւն։ Պալարիք ՚ի պէս պէս փափկութեն են ծաղիկք, որք զանազան հոտովք, և գեղազան գունոցն վայելչութեամբ գեղեցիկ պանծան ՚ի բուսաստանս. ոչ են մանուշակ, նարգէս, մեխակ. ևն։ Ծաղումք զկենդանաբոյսն, որոյ ճապուկ գոլով ջրոցն, եթէ ոք միրգեսցի ՚ի նա՝ զնմ տերեւս ամփոփեալ պատի զնեռանէ. որով երբեմն նաև զմոչուճս ըմբռնէ, և ապա թափրշամեալ ջրոտեայ. նման է սմա և պաղտատն, այլ սա անդրէն ուղղէ զտերեւս։

1 Աձիլ է սա ՚ի նուռնուճարէ ծաց մերոց, որ նոյնպէս ՚ի ջուրս աձի. բայց այս միայն ի չինս գտանի. զորմէ պատմէ Հայրն քննդէ, թէ ոմն ՚ի չինաց առեալ գոյն արմատ այսր բուսոյ եդ ՚ի մէջ հին պղնձէ գրամ մի. և եդեալ ՚ի բերան մանրեաց ատամամբք ղոյդ ըստ արմատոյն և պղպենձն։ Ի՛նձ զոյսն խոհվեի ա՛ն. Ձե. ձ՛. որոյ տերեւք նման են նարինջի, և ծաղկին սպիտակ. զոր եգիտ վանահայրն ոմն անապատականաց։

2 Ի՛նձ է տունկ փայտեղէն, որ ոչ այնչափ ՚ի վեր

776 Յոբաքեան։

Մաուքերն քորամէս՝ 'ի Թաթար՞ս լինի,[1]
Երեք ոտնաչափ՝ քարձրացեալ աձի.
Որ իբրև գառն ինչ՝ յարօտըն երևի,
Կըձղակ ոտք և հերք՝ 'ի նոյն որոշի։

777

Այ 'ի մէջ գալար՝ խոտոց քուսանի,
Որպէս գառն յարօտ՝ մինայ կենդանի.
Չորչափ Թարմ են քոյք՝ ինքըն գալարի,
'ի սպառիլ խոտոյ՝ անդէն ցամաքի։

778 Յաղաքն։

Խակ լըշտակն է քոյս՝ որ սակաւ աձի,[2]
Քայց արմատ նորա՝ է հիանալի.
Օ՛ի իբրև նըլման՝ մարդոյ գտանի,
Գըլուխ ձեռք անդամք՝ 'ի նոյն նըշմարի։

քարձրանայ. որոց ոմանք են բազմաբուն և ոմանք ոչ։ Ոմանց է մրտենւոյ Թուփն Ընչի կոչ (յոյն) ῥ. ա. Զի, ձիք. որ յետ երից ամաց բերէ զտերև առատ յոյժ. ծաղկիկ նոր է սպիտակ նման վայրի վարդի. չունք յամին երից քաղեն զտերև նորա. նախ 'ի մարտի՝ երբ սերևքն են մանր և քնքուշ, զոր չորացուցանեն 'ի հովանաւորս վայրս. սա ապնիւ գոլով արագաձի կուչի, զոր ոչ երբեք հանեն յաշխարհէ Իւրեանց. իսկ զերկրորդն ժողովեն յապրիլի. և զերդն 'ի մայիսի, և 'ի յունիսի, զոր առաքեն յՏ ՇՄ։

1 Իորամէսն Թարգմանի գառն, զի ՟ի վկայէզս սուրիոսի և ագաղիկերայ նման է սա գառին՝ ոտիւք, կճղակ, ունկամբք, և բովանդակ իսկ մարմնովն, քայց յեղջերաց. որոց փոխան ունի Թեղս իբր հերս. յորմէ Թաքը առնեն արտախուրակս։

2 Գոյ 'ի չինս և բոյս ինչ ձեռն ունի անուանել կանգնակ չափ բարձր. բուն նր Թաւամազ, ուղիղ և անոսո. որ արձակէ տերևս սրածայրս, և լինի 'ի ձև հովանոցի. բերէ գծաղիկ մանուշակագոյն. որոյ արմատ՝ նման է մարդոյ հանգոյն լըշտակի. և է ընդհանուր գեղ չինաց Ջդեմ ՇՄ ախտից, մանաւանդ Թուքացաւոցն (չէրեփ)։

779 Օ՛ինչ է ծառն։

Ծառն է տունկ փայտեայ՝ որ բարձրը ձրգի,[1]
ոստովք տերևովք՝ կանաչ գալարի.
Որպէս ձիթենի՝ կաղնի թըզենի,
և այլ անհամար՝ յայլևայլ տեղի։

780 Յո՛ չինչ մայրն։

Մայրն երկայնակեաց՝ ծառ հըռչակելի,[2]
՚ի վերոյ քան զայլս՝ ամբարձեալ լինի.
Որ ՚ի լիբանան՝ բազում գըտանի,
առ սողոմինիս՝ քուսեալ գոլ կարծի։

781 Յո՛ արմաւենին։

Արմաւենին է՝ ծառ ափրիկեցի,[3]
քաղցրահամ պըտղով՝ ՚ի գըրոց գովի.
Որոյ է տեսակ՝ իբրև հերձանի,
հոսկ հիւթ անոյշ՝ պատուական գինի։

1 Ծառն ունի բազում տեսակս. որոց ոմանք են վայելուչ, ոմք կաղնին, չադանակն, եղեւ. և ոմանք ընդանի, ոմք գաբնին մշտադալար. ոմանք նոյնին, ոմք ուռին. ոմանք առաւել քան զնեղալեցս բարձրանան. և ոմանք այնչափ սաստուր լինին, մինչև զբուն նոցն 7 մարդիկ հազիւ ըգըրկեն։ Պատմէ պլինիոս, թէ յաշխարհին լիակիա գոյր սոսի մի 80 ռանաչափ փապարաւոր. յորում 18 բարձակոցդ արար իպահուէ զուլոս գեսպան։ գէր։ ծ։ Պատմէ Հայրն կիրակերոս թէ տեսի ծառ մի ՚ի հնդկիս, յոր ոչ ՚ի փապարի կարէին բնակիլ 25 մանկունք։

2 Մայր ծառն գրեթէ քան զամ ծառս առաւել բարձրանայ. և երկարադոյն տևէ վն անփուտ լինելոյ փայտի նը։ ՚Ի սոցանէ 28 երևին ՚ի լիբանան մեծամեծք յոյժ. զորոց ասեն, թէ սողոմինի է անկեալ զայնս։ Դառանին յեգիպտոս և ծառք թզոյ, որք կեան ց600 ամ։ Գոյ ՚ի պէնկալա ծառ մի կոչեցեալ թզենի բենիամինեան. որոյ են 60 բունք կապեալք ընդ միմեանս, և չըմապատան 370 ռանաչափ, իսկ ստուերն ՚ի կէսաւուր 1100. զոր չափէ ցին ՚ի 1787։

3 Արմաւենին մշտադալար զոյգ բուսանի արու և էգ.

782 Ա՝ ԼԵՌԻՆԷՆ։

Իսկ լեռինէն է՝ տեսակ մի ծառի, [1]
մինչև հարիւր ոտն՝ ձըգի երկայնի.
Ստուար միակերպ՝ յարմատոյն ցվերը,
միայն ոստք ուղղի՝ ի ծայրը բուսանի։

783 Ա՝ ԼԵՌԷՆԻՆ ՀՆԴԿԱՑ։

Լերէնին հնդկաց՝ է ծառ միաբուն, [2]
երկայնեալ ձըգի՝ ի մեծ բարձրութիւն.
Որ ուղղեալ յոստոց՝ ըզթեղս ի գետին,
արմատս արձակեալ՝ նոր ծառք բուսանին։

որով էգն առեալ յարուէն փոշի ինչ ալէբանման (765) պղպեբերի. ապա թէ ոչ՝ ինչ անպտուղ. քանզի անկեալ երբեմն զոյգ մի արմաւենեաց հարուստ միջոցաւ հեռի յերեքաց ոչինչ պղպեբերնաց էգն, սակայն երբև բարձրացեալ քան զամ միջանկեալ ծառս՝ եռեա զարու արմաւենին և ընկալաւ ի ձեռն հողմոց զսիւնըն, ակաւ այնու հետև պղպեբերիլ։ Ոմանք է արմաւենոյ և նաբիւ ծառն հնդկաց. բայց սա ի միում կանթի ունի բաղում տերևս երբև ճառագայթս. զպտղոյն պաեալ կայ կաղնւոյ մալզ ինչ. և զինի այնր կարծր թեղք. յորմէ առնեն պարանս նաւուց. ապա երևի պտուղն, որ ունի ի վր զիեհեկս ոմն ընկուզոյ, և է նման շագանակի։ Ի ծառոյ սասի ելանէ հիւթ ինչ, որ լինի բմպելի. իսկ հեղև պղպէին ի գործ ածի ի տեղի անօթոց, դրգալաց, և ի պէաս ձգելոյ զԴուխ. յորոյ անուն և այն կոչի նորա կիւղ։

1 Լինի ի հնդիկս և ծառն խաշ, որ զպտուղն բերէ ոչ յոստս, այլ ի բուն անդ ծառոյն, սկսեալ ի ստորինն կողմանէ արմատոյն, մինչև ցվերս բնոյն. պտուղ նորա դեղագործն և սեխանման. այլ մեծ քան զայն. ի մէջն կիղևոյն ձգեալ կայ ձող ինչ երբեմն առանձ. յորոյ վր դաստարեալ են մանրահատ պտուղք, ուռնելով ի մէջի քաղցրահամ հիւթ ինչ սպիտակ։ Թռչուն զանազանաբերք ծառն ամերիկոյ նման կաղնւոյ. յորոյ ի բունն բանան հեղքուած ի մարտի, և մեղր ծորակ հոսի անտի հիւթ. որ եռացուցեալ պնդանայ, և լինի շաքար։

2 Սորա տերեւք նման են տերևակիլի և պտուղն թզոյ.

784 Ո՞վ է օձաուաբերն։

Ո՞վ ձաուաբերն է՝ զերթ ընկերգենի,
որ ի միջ պտղոյն՝ զանպուսած լինչ փակի.
Որ և շատ փերփուր՝ արձակեալ լիւրմէ,
մնքերկ ըղհանդերձ՝ նըմման օձաուի։

785 Յո՞ ձարպաբերն։

Ծաղումն զձարպաբերի՝ ծառըն չինացի,
տերևք սըրտաձև՝ կարմիր շողշղոլ.
Ոսկ պըտուղն ի միջ՝ պատենից փակի,
ընդ որով գոյ ձարպ՝ որ լուծեալ հալի։

786 Յո՞ կենաման։

Կենամանն է ծառ՝ իբրև ձիթենի,
որոյ է տերև՝ նըման կիպարոսի.
Ունի սեաւ պտուղ՝ և տերև կըրկին,
նեղքերն է ընտիր՝ որ մեղ ընծայի։

որոյ թելք երկայնեալք ի գետին, արմատանան, և բուսեալ գրաւեն զերկիրն իբրև անտառ։

1 Ա՛յս ծառ բերէ զպտուղ փակեալ ի միջ պատենի յերից չերսաւ բաժանելոյ. ուր միջուկն արտաքին կեղևոյ է սպիտակ գոյացութեամբ, գունով հոտով և ճաշ իբրեզ նման ձարպոյ. զոր հանեալ լուծանեն առ հրով և եդեալ ի նմա պատրաստ ի թելէ կնիւնոյ՝ վառեն ի գիշերի, ոչ միք զկանթեղս. գոնեայ չ՚ծխոտնայ և ծառ թղթաբեր. յորոյ ի կեղևանացն լինի թուղթ. այլև մանեն զբուան, և գործեն զկաւաս. յօրինեն անօթ և պատրոյգս, որ է գիւբաւառ։ Գոյ և սեաւակ մի ծառոյ յատկիկ. ըստ որոյ կեղևաքաղ մածեալ կան փայտեղէն թելք, յորմէ գործեն զկաուաս և զգենուն. Թող զծառն ոսկեբեր յատկիկ, ընդ որոյ կեղևանաքաղ բնոյ գոյանայ սանր ոսկի. Թերևս պատճառեալ ի հանքային հողոյ տեղոյն։

2 Ծառ կենամանի լինի ի սեղեան կղզի. որոյ ծաղկին է սպիտակ, և պտուղն սեաւ, բոլորակ և կաղնեաչափ. սորա կրկին են կեղևք՝ ներքին և արտաքին. ներքինն գործով ալիսանի, բերի առ մեզ և յամ աշխարհ. և այն է գործն։ Անգ լինի և ծառ պղպեղի փորբիկ, և պատառուկ իբր Թուփ, որ բերէ հատս ոսկուզօրէն։

787 Յ՚ ՆԽԱՒՆ ։

Խակ ծառ մեխակին՝ է դաբեղոյ նման,
բերէ զ՚հոտաւէտ՝ ծաղիկ պատուական.
Օ՚որ ջրացուցեալ՝ առ մեզ առաքեն,
՚ի սէլեան կղզւոյ՝ որ ՚ի հրնդկաստան ։

788 Յ՚ ՂՄԱՆԷՆԷն ։

Յ՚ը զմրուխենէնին՝ է ծառ ափրիկեան, [1]
ոյր ստուար է բուն՝ ուղղ ոտք բարձրանան.
Երբ վիրաւորի՝ հոսէ արտասուս,
ըստաշլի՚ն հոտաւէտ՝ ՚ոն պիտևան ։

789 Յ՚ ՀԱԼՈՒԵՆ ։

Հալուէն է ծառ ինչ՝ ազնիւ պատուական, [2]
փայտն է իւղային՝ հոտով անուրման.
Օ՚որ հատեալ յերկար՝ թողուն ՚ի բացի,
և զընտիր մասունս՝ հաւաքեն անտի ։

1 Զմրուխենէն է ծառ փոքրիկ և գանգրատոտզարթ. որ ՚ի վիրաւորին կաթեցուցանէ հիւթ ինչ պատուական, զոր կոչեմք սաուչին, կի՚ զնուռս։ Սմին նման է և բալասան ծառն փոքրիկ իբր եռտանաչափ բարձրութի՚ չատնախեալ ՚ի հնդիկս. ունի տերեւս մշտագալարս, որ ձեղքեալ հոսէ զօդատակար հիւթն բալասան։ Գոյ յարեւմտեան կողմս և ծառ մի բարձր և ստուար, վիշապ ձայնեալ. գոյն կեղեւոյ ՚որ նման է թեփոյ վիշապ օձի. ոսոք ՚ոորա բուսանին՝ երկու երկու լերկ ոտի բազուկ մարդոյ, ունեզվ ՚ի ծայրն տերեւս ցաւատեսաւս իբրև զնամոնս. հեր ձեռ զկեղեւս ՚որ եղանէ հիւթ կարմիր. զոր դեղարարք կոչեն սրէոն վիշապ ։

2 Զհալուէն կի՚ (նօթ աղաճէ) հաստեալ ՚ի հնդիկս դնեն ՚ի բացի, մինչև փսի փայտն. բայց քանզի ՚ի ծառն գտանին երակք ինչ իւղայինք, որք ինան անփուտ, և սոքա են բուն նօթ աղաճէ. որ սփռի ՚ը ՚ամ աշխարհ։ Այս աղնիւ ծառ լինի և ՚ի չինս, այլ առաւել ընտիր. որ նման է ձիթենւոյ, և բուն ՚որ բազկանայ յեռատասակ փայտ տէ, առաջինն է ծանր և սեւ. երկրորդն սպիտակ և թեթև. երրն՝ որ է ՚ի մէջ բնոյն ՚ի յարդի է յոյժ. հոտ

790

Ա.ՅԼ Թուել ըզցե՛ղ՝ տընկոց զանտգամն, [1]
տըկարանան քանք՝ զի են անսահմանն.
Ոըք՝ ի փառս անքաւ՝ մատին տիրական,
դարձեալ և՝ ի պէտ՝ մարդոյ արարան։

նը՛ անուշակ և միանգամայն դեղ ուշաթափաց։ Տերևօք նը՛ ծածկեն գիւղականք զարկս տան իւրեանց, և վանբեն՝ ի տեղւէ սկաւառակէ. մանրաթել՛ք տերևոց նմանգողով վշոյ՝ ի պէսպէս իրս պիտանի լինին։ Փուշքն տերևոց՝ ի կէր արկանին փոխան բևեռաց։ Ի հատանել զոսպս բնոյն ծորէ հիւթ մեղրահամ, որ յետոյ փոխի՝ ի պատուական քացախ. վայր ոսպոյն ունի զհամ կիտրընի, զոր մարթէ ե ուտել։

1 Անհամար է տեսակ անկոց, ոմ՛ յայտ է ամենեցուն. որոց յատկութի՛ւնք, և հիանալի գոյն և ձև թէ՛ տերևոց և թէ՛ ծաղկանց ափշեցուցանէ զմիտս մտաւորաց։ Բայց թէ յիւրաքանչիւր անկոց որչափ տուն՛կք արտադրեալ են մինչև ցայժմ, անհնար է մեզ իսկ ըմբռնել. քանզի ե դեալ թէ մի հատ եգիպտացորենոյ յատաչլին ամի բերէ 100. որոց մի մի յերկրորդ ամի բերելով այլ ևս 100. լինին ընդամ 10000. յերրորդ ամի լինին 1,000,000. ի չորրորդ ամի լինին 100,000,000. և այսպէս հետզհետէ աճելով՝ ի տասնմնանէ աշխարհի՝ որք են ամք 5813. մինչև ցայժմ հաշուեալ ելանէ թիւ մտաց անբարդելի, զոր առ՝ ի բացատրել պիտին 11621 զոյք հանդերձ միութ՛ե. որք եթէ գիշերն՝ ի վե՛ր երկրի, մինչև ցպարուհնակն երևակէ հասանէր չեղջակոյտ նոցա։

ԿԵՆԴԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

791 ՕՐԻՆԷ Ե։

Կենդանագրութիւն՝ ուսումն հեշտալի,[1]
Ձառէ զբնութեանց՝ կենդանեաց սեռի.
Օր՝ որ ի զանազան՝ տեսակ որշեալ,
Ձառեն բընախօսք՝ ըստ իւրեանց կարգի։

792 ՕՐԻՆԷ Ե ԿԵՆՔԱՆԻՆ։

Կենդանին ոմնակ՝ ե գործարանի,
Շարժուն գրնայուն՝ ինքնին ի յերկրի.
Ոմնի զօրութիւն՝ պլըտաբերելոց,
այլև ըզգալոյ՝ և կամ բաղձալոց։

793 ԱՆ որպէս բաժանին։

Ընդհան կենդանիք՝ ի վեց կարգ զատին,[2]
ի ցամաքային՝ և ի յօդային.
Կաև ըրտյին՝ և յերկաենոյաղ,
յայլևայլ որդոոնս՝ ընդ երեսս որբևին։

1 Կենդանագրութիւն է մասն փիլիսոփայութեան, որ Ճառէ զյատկութեանց, և զպէսպէս տեսակաց կենդանեաց. ը որով փակի և Տարբակաղմութիւն (890). վը ևս գործածի բանիւ կամ անդամք մարդոյ ը մեծի մասին նմին են գոր Ծարանաց այլոց կենդանեաց։ Սակայն զայս ինչ յուշ առնել կամիմք Համբակաց. զի մանր խուզել զյատկութիս կենդանեաց ը նոր դիտողութեց Թողաք բնական պատմութեն։ Իսկ մեք նշանակեցաք և զհին կարծիս նախնեաց ի հմուտքն և ի զուարճութեն մանկանց։

2 Կենդանիք նախ ը հանրապէս բաժանին յերկուս տեսակս՝ ի բանական, և յանբան։ Բանականն է, որ ունի զքօրութիւն խոհելոյ և կամելոյ. ոյզ մարդիկ է հրեշտակք։ Իսկ անբանիք՝ որք կեան կենդանական կենօք, և ունին զգայութիս և զշարժուն յառաջխաղաց. են՝ ա

794

Ի՛սայց ցամաքայինք՝ մակաբաժանին,
'ի սողուն գեհուն՝ Ը'ի չորքոտանին.
Ի՛յլև յընտանի՝ և 'ի վայրենի,
որպէս ձի արջառ՝ գազան կատաղի։
795 'Ի չորքոտանիս՝ որ է ձեծագոյնն։
'Ի չորքոտանիս՝ փիղն է մեծ գազան,[1]
որոյ մորթեն է լերկ՝ խիտ և կընձռահան.
Երկու ատամունք՝ ցցուեալ 'ի ծնօտի,
և սոխնք 'ի յեդ՝ կին մարդոյ նըմանի։

Չորքոտանիք. Է ֆաւչունք. Ը Սողունք. Թ Մինչաւք կամ աղեաղք. Ժ Զկունք. Ի Խեցեմորթք։ Որոց ամենուն տեսակք այժմ համարին 24 հազար. ուր դաւելի անյաղթն ունէ 1000 տեսակս կենդանեաց. յորոց 600 'ի ծովու և 400 'ի ցամաքի։ Են որք ունեն 12 հազար, և են որք ունեն իբր 30 հազար։

1 Չորքոտանիք արարան 'ի հողոյ 'ի վերջերդ աւուր արարչագործութեանն. որք և ունին սեռական յատկութիս որով զանազանին յայլոց կենդանեաց. Ա Զև նոյ է այլատարազ՝ գնալով քառատանի. Բ Ուղղ նոյ փորք է քան զմարդոյ հասնի մատուցիլ մարմնոյ իւրեանց։ Գ Պէնին երկու ձգանուտ յօդակապս, որք սկսեալ 'ի գլխոյն գնան մինչև 'ի քամակամէջս, որով և անաշխատ 'ի կախ ունին զգլուխ իւրեանց։ Դ Սատաքս նոյ այլազգ է քան զայլոցն. զի ոմանք 'ի նոցանէ ունին 2. կամ 4 ատամունս. ոմք կոնին. այծն. նաև ուղտ, որով որոշեան։ Տեսակ չորքոտանեաց համարին իբր 450. յորոց ոմանք են մնակեր, ոմանք խոտաճարակ. կէսք ընդակեր. այլք ունին 'ի թաթս միս ճարպալից. զոր երբեմն լիզեն. և այնպէս կեան անկերակուր զամեն ողջոյն, ոմ արջ. ոմանք են եղջերաւոր, և կձղակաւոր ոմ արջառք. ոմանք եղջերաւոր կամ մատնաւոր. են որք որոշեան, և են որք ունին զկ մատունս որոյս ունգիդ չիւրն. կէսք երկու մատունս. այլք 5։ Ֆոդում զղ չկին, որ ունի զմաչկաթև, որով թռչի. և միանգամայն է չորքոտանի։

796

Ա.յս Թանձր անասուն՝ է քաջ կրթական ,[1]
մինչ պատեբազմաց՝ լինել պիտական .
Ունի ըզկընճիթ՝ դիւրադարձ երկայն ,
ձրգէ և վարէ՝ զայն ձեռաց փոխան :

797 . Օ ինչ է առիւծ :

Ա.ռիւծն է փոքրիկ՝ քան ըզփիղ գազան ,[2]
այլ յոխորտ զօրեղ՝ արքայ վհկական .
Որոյ և ոսկերք՝ կուռ են և անծուծ ,
սակաւ ըմպէ ջուր՝ ահեղ է և ձայն :

1 Ա.յս սոսկալի կենդանի մեծ , և բարձր իբր չորեք-տասան ոտնաչափ գն , Ա.ն . ձիճ . երկայնակեաց է և ուժեղ . զի կեայ 3500 ամս . գլուխ նր ահագին , և ըստ-ուարամորթի , ոսկր ճակատուն Թանձր իբր ութ մատնա-չափ , մինչև մարթ է մտել ի նմին բևեռ . բառնայ ըզ-բեռն 3000 լիտրէ ծանրութիւ . ի միում աւուր ընթա-նայ վեցօրեայ ճանապարհ . ուտէ 40 հօխայ որիւղ , կամ հաց . և ըմպէ բազում դոյլ ջուր , կիս գինի . պարկեշտ է յոյժ . նախ վարէ զմարդիկ , և ապա ելանէ ի կարեւ որովայնին : Դիւրընդել է և կրթական . մինչ զի ի հնումն կրթէին զնոսա արբուցանելով զգեզ , և ի ծայր կնճթին կապեալ սուսեր հանէին ընդէմ թշնամեաց . որ կոտորած մեծ գործէին , և առաթուր կոխէին զնո-սա : Եւ երբեմն փոքրիկ աշտարակս ի վերայ կանգնէին փղին , և մտեալ ի նեղքս պատերազմէին : ☞ Ակ . գլ . չ . 30 :

2 Ա.ռիւծն ի մէջ գազանաց վհկ ճանաչի . զի է կենդանի ահաւոր , և մեծագլուխ . բերան նր մեծ . մարմինն թեթեւ և ջղային . ճիրանքն ուժեղ . ձեռ նր երկայն և զօրաւոր , մինչև յերկիր կործանել այնու զկենդանիս : Ա.ռու առիւծն աբ Ա.ն . ի . է իբր ուղղանչափ , ունի ի պարանոցին զսաչ . այլ ոչ էգն , որ և լինի փոքր . սակ թէ որոց գէս է կարճ և գանգուր , այնք հեզ լինին . և որոց երկայն և անգանգուր , դաժան լինին յոյժ :

798

Ա.յս գազան արի՝ յորժամ ծերանայ, [1]
չբգնտեալ գազան՝ ըզմնրդիկ որսայ.
Ա.ռ ընդ իմանդարձ՝ է յոյժ անողորմ,
իսկ նըկուն անձանց՝ և կանանց գըթայ։

799 Ա.ՆԴԵՂԷՐ։

Ա.յլ ոչընդեղ ջուրն է՝ գազան վիթխարի, [2]
գունով մեծուԹիՀ՝ նմանեալ փըղի.
Ի վերայ ոչընգաց՝ զեղ ջուրք ու ունի,
մորԹ նորա կարկամ՝ իբրև ըզկեցի։

1 Ա.յս գազան ծանրաչունչ և սատակաճաշն՝ տուկայ ընդերկար անճաշակ՝ զայրանայ եԹէ ոք հայեսցի ի նա ժպիրհ ակամբ։ Ա.մենայն կենդանիք երկնչին ի մանել, ընդ որս մաքառի, և ոչ բնաւ Թիկունս դարձուցանէ. այլ մարտնչելով յեաս դնայ։ Սակայն մարդիկ հնարիւք զարհուրեցուցեալ փախուցանեն զնա. և ի կողմանս հա պեշու բնաւանեցուցեալ վարեն ի տեղի չանց։

2 Ա.յս կենդանի է ԶՆ. զնա. է ի չափ երկայնուԹեՀ փղի, այլ ոչ բարձր և ստուար. ոտք նր կարճ. ձև նր և ձայն նման եղեն. մորթ մարմնոյն լերկ և բազմուղի նմա նեալ պատենից լի Թեփօք բաց ի գլխոյն և յորովայնէն. բնուԹիՀ հանդարտ է, այլ ընդ գոյն կարմիր զայրանայ. կեայ ըստ երկար. կրկ զծնունդս յորովայնի աւելի քան զամ մի. ոչ և փիղն։ Թագ գլխոյն ձիւնասպի և մեծագոյն, երկայն և անուառաբնակ. զորմէ պատմեն նախնիք Թէ ունի ի մէջ ճակատոյն եղջիւր մի երկայն. զոր արեալ ի վիմ մաքառի ըստ փղոյ. և երբեմն կալեալ եղջիւրք զփիղն ի վր գլխոյն չորք. ամ զօրուԹի սորա ա աեն է յեղջեր անգ, որ և է տպաքինիչ Թիւնից. մինչ զի այլ կենդանիք սպասեն ամս առ ջրով. զի սա նախ խառնէ զջուրն եղջերբ, և ապա ըմպէ. յետ սորա և այլք ըմպեն։ Բայց նորք անհաւասարի համարին զայս կենդանի։ Գոյանի և մեղջերուս ծովային. յորոյ ի քեբոյն գոյ եղջիւր մի փոքրիկ։

800 Լաւ վագըր ։

Վագըը գազանն է՝ զօրեղ կատաղի ,[1]
և կերպարանօք՝ գայլոյ նըմանի .
Պատառէ ըզմարդ՝ և ըզկենդանի ,
'ի սէր իւր կորեանց՝ որսորդաց մատնի ։

801 Լաւ Բորենին ։

Խոհ բորենին է՝ գիշատիչ գազան ,[2]
յաճախ գըտանի՝ յափրիկեան սահմանն .
Զայնէ որպէս մարդ՝ ըստ սկզբնիսոյն ,
խաբեալ գիշատէ՝ ըզմարդ առաժամայն ։

802 Օձինէ է փենդինկէմ ։

Պօղ 'ի քափրաստան՝ գազան կենդանի ,[3]
որ յօդենդացւոց՝ փենդինկէմ կոչի .

1 Աւյս գժնդակ գազան խայտափիտ յաճախէ 'ի հրն դիկս , արագաշարժ է յոյժ , որ 'ի մեծ բարձրութեի տան նու . մարմին նր երկայն , և առաջին ոտք նր կարճ . և ետրա որդեսէր է յոյժ և հանապազ կատաղի . զորոյ երբ պիտրիանս յափշտակեն , կատաղէ զինէ զհետս որսորդաց , և զհետ պնդի անհնարին արագութեբ . յորմէ չկը հնար ղերծանելոյ , եթէ ոչ զմին 'ի կորեանց ընկեցիկ առնէ լով . զոր բարձեալ տանի յորջ իւր և անդէն պնդի զկնի , մինչև մտեալ 'ի նաւ փախչի որսորդն ։ Աբեն թէ սա ոչ յարձակի 'ի վր սպիտակ մարդոյ , որպէս և ինձն . որոյ դէմքն նման է կատուի . աչքն գեղին , լեզուն խորտաչ բորտ , թեթեւաշարժ է և կատաղի . ոտ չ ։ Զե . ղէ ։

2 Աբէ պլինիոս թէ այս կենդանի ա , Զե . ղէ . ձայնէ ոտ մարդ 'ի վրանս հովուաց . յորմէ խաբեալ մարդիկ իբրև ելանեն արտաքս՝ կալեալ գիշատէ . զոր արդիք ոչ հաւասան համարին ։ Գտանի յափրիկէ և ընձուղտ է ։ , Զե . ղէ . որոյ պատանոց հանդերձ գլխոյին նման է ուղ տու , և մորթ նր խայտափիտ ոտ զընձու . 'ի վր բարձից առաջին ոտից ուներ պատկաձև նշանս « , » ։ Ծոզ գաւէ կենդանին 'ի ջուր երթալոյ . որոյ ասք և հնդկաց նման են եղջերուի , դլուխն՝ ձիոյ . մորթն և ականջք իշոյ . եղջերաւոր է և երագընթաց . անցանէ ը դետ լողալով ։

3 Փինքինկէմ նշանակէ անօն գարշահոտ . զի գարշ հո

Որում երբ մարդիկ պընդին ըզկրնի,
արձակէ չար հոտ՝ անհանդուրժելի։

803 Ա՛ռ բռնասոս։

Բռնասոս գազան՝ նման է եզին,
՚ի դաղմնտիա՝ յաւէտ գըտանին.
Որ ըզկուն ձըգէ՝ ընդդէմ որսորդաց,
այրէ և վառէ՝ ջերմամբ սաստկագին։

804 Ա՛ռ յովազ։

Յովազ բարկասիրտ՝ հոտով կինքն ածէ,[1]
զայրևայլ գազան՝ կաշեալ սատակէ.
Ա՚ղջն ՚ի ձըմեռան՝ յօրացեալ թըմրի,[2]
ելանէ ՚ի ծառ՝ որպէս մարդ շըջի։

805 Ա՛ռ կաղելլայն։

Ա՚ղտ կազելլայն է՝ մեծ չորքոտանի,
գլուխն է սեղտոտ՝ բայց եղ ջիւրս ունի.
Ա՚արմինն է եղին՝ ձայն որպէս այծու,
յետին ոտք երկայն՝ զերթ նապաստակի։

տով՝ զոր արձակէ երբեմն հեղձուցանէ զչէտատմուտ որ-
որդս. որով սահելն յետս դառնալ։ Իակ գոհիա կենդ-
դանին ա. Ձե. ղէ. մեծ է քան զկատու՝ հասակ փշա-
պատ, որ ըստ տեսանելոյն զթշնամիս ցցուելով զանցս պաշտ-
պանի։

1 Յովազն է տեսակ մի ընձառիւծու ՚ի չափ որթոյ.
գլուխն բոլորաձև, թեթևաչարժ է և երագընթաց։
Իակ ընձառիւծն թեթևաչարժ է և մանուկսի թշնամի
շանց։ Գտանի յափրիկէ և վայրի շուն ՚ի չափ ոչխարի.
որոյ սրունքն երկայն, ատամունքն և ճիրանքն սուրբ
սուր, կատաղի յոյժ մինչև պատառել զմարդ։ Թողլ զա-
մենաթեթև փաճկի ոռդն գեղեցկասրունք. որում ոչ կարէ
հասանել երիվար. տոկոյ անսուաղ զաւուրս երիս։

2 Ըստ այսմ և առնէտ կենդանին ՚ի չափ կատուի, ՚ի
ձմեռայնի թմրեալ ՚ի ցրտոյ մնայ ամիսս 6 անշուշտ. իակ
՚ի գարնան յառնէ ՚ի կենդանութեն, զոր լերեն յօրինակ
յորութեն։

806 Յ– լամայ ։

Ողբոտանի է՝ լամայ կենդանին,
այլ թմբիր են շըրթունք՝ և մեծ աչք նորին.
Աբձրակ և մագիլ՝ ի յետուստ ունի,
որով ի սահուն՝ վայրըս դեգերի ։

807

Յգ սորա երկու՝ ըստինըս ունի,
և երկու միայն՝ կորիւն ծնանի.
Ողբ յամերիկա՝ միայն գըտանին,
փոխան գըրատուց՝ բեռինըս տանին ։

808 Յ– մուկն անտառային ։

Ա՝ուկն անտառային՝ է գորշ կենդանի,
մեծ քան զմուկն է՝ կըրկին աւելի.
Յգն ունի ըզպարկ՝ ընդ որովայնիւ,
քանայ և փակէ՝ երբ պիտոյք լինի ։

809 Յ– սամբոյ ։

Սամբիրօն ի մեզ՝ այծամարդ լըսի, [1]
երբեմն ի վերայ՝ երկոտից շըրջի.
Այր գըլուխ է մեծ՝ ըստուար է մարմին,
ըստինք են կընոջ՝ յորովայն իգին ։

810 Յ– կապիկ ։

Կապիկն է ձարտար նըմանօղ մարդկան, [2]
և կերպարանօք՝ մարդոյ է նըման ։

1 Սամբիրօն և այլն նման կենդանիք՝ են տեսակ մի կապկաց. մի ի սոցանէ բերաւ ի Հոլանտա, որ էր էգ ըստ մեծութեան պատանեկի. բայց կրկին ստուար և ուժեղ. ունէր քան թիւր, քամակն թաւ. փորն և ստինք մերկ. դէմք և այլ անդամք նման մարդոյ. առնէր զգործոցն ինչ մարդոյ. ընկոյզանէր յանկողնի՝ եդեալ զգլուխն ի վր բարձի. ուտէր զպտուղ, ըմպէր զգինի, և յատակ շրջէր երկոտանի ։

2 Կապիկք ոչ միայն ըստ արտաքին կերպարանաց նման

Որոյ են տեսակք՝ բազում զանազան,
որպէս և Եօթից՝ մարդակերպ գազան։

811 Օ՛ինչ են առդանիք։

Սողունն կենդանիքն սողին ՚ի յերկրի,՝
ձրգելով զերկայն՝ մարմին ըզկընի.
Վիւրաքանչեր զոլով՝ և շրջմասարոյր,
կրծկեալ և թաղեալ՝ գընան իւրովի։

են մարդոյ. այլև ըստ նեբքին գործարանաց բազմաք նման գոյանին. որոց տեսակք բազում են յոյժ. ոմանք ունին երկայն ագիս որպս ասէ Ձն. ղէ. և զոյն վարեն ՚ի տեղի ձեռաց, և որոյն վնեցեմորթս ՚ի շրջից. և ոմանք ունին զպարկ ըստ պարանոցաս. ուր պահեն զուտելիս, և ՚ի լը նել հարկի հանեն և ուտեն. ոմանք են ընտանի որք իբ բև մարդ աշխատին և գործեն զկաս. և ոմանք վայրագ և կատաղի. ոմանք խմբովին շրջին հազարաւորք ՚ի միասին, ունին զգլխաւորս, որոց հպատակեալ գնան յորս, յորժամ ննջեն՝ գնեն զմին պահապան իւրեանց։ ՚Ի սոսա ձկտիցն կապիկ ասէ Ձն. զէ. առաւել նման է մարդոյ. երեսն տափարակ, գլուխն բոլորշի, խորհրդ, տապակաքթի և երկայնաբազուկ. թաթիք ձեռաց և ոտից՝ շերկ, մեծ չորս ոտնաչափ, հանդարտաբարոյ և արագահարժ. ուտէ զհաց և զպտուղ. իբրև զմանուկ յայտ առնէ զկարիս իւր կամ զցաւս։ ՚Ի նիկրիտիա գտանի տեսակ մի մարդակերպ կապիկ, ըստ Ձն. զը. զոր կալեալ բնակչաց մարզին մանրել զորիղ, հանել զջուր ՚ի ջրհորոյ, տանել զբեռն ՚ի վեր գլխոյ, և գարձուցանել զչամ փուր առ ՚ի խորովել զմիս, ևն։ Գոյ ՚ի հապէշս և տեսակ մի ՚ի չափ կատուի, մարդակերպ և մերձաւն տապկ, հեծեծէ ոռ մարդ. ար ոս. Ձն. զը։

1 Սողունք են անոտն կենդանիք, որք սողոսկեալ ընթանան. իսկ որոց մարմինք ոլորտագիծ և շղթայակերպ են հիւսեալք, այնք յառաջ խաղան և ընթանան գարձս գարձ գալարմամբ. ոմանք են հաղոյնի կամ դամաչոյնի, և ոմանք ջրայնի և ջրածնի. կենք են անաբինի, որպէս օրդուանք. այլք աչխանաորի, ոպ օձք, վիշապք, ևն։ Օձք շարժին ՚ի ձեռն անուաձև թեփից գասուորելոց ըստ ո բովայնիս հակառակ կարգաս, քան զոր ունին ՚ի թե

812 Այս չանչ են պեսակք։
Բազում են տեսակք՝ սողնոց ցամաքի, [1]
Ի զի անարիւն՝ ի զի փանաքի.
Որպէս օձք ձրձիք՝ թըլթլուզք և որդունք,
ԵՒ այլ մեծ գազանք՝ որք սողին յերկրի։

813 Ոչ եմաճ սողունք՝ գազան վիթխարի, [2]
Աձին երկայնին՝ ի չափ սոսկալի.
Որպէս եզև այն՝ առ բագրատ գետով,
Զոր ուլմքօք Հարին՝ զօրք ատաիկոսի։

814 Ո՞ւր են Բասիլիսկոսն։
Բասիլիսկոսն է՝ օձ ինչ թիւնաւոր, [3]
Կամ քարբ դըժընդակ՝ օձիկ թագաւոր.
Ոսկ խարամանին՝ այլ տեսակ օձի,
Որ խայթեալ ըզմարդ՝ փութով մեռանի։

կունս. քանզի ծայրք թեփոց ի վեր գոլով քան զմակերեւոյթ մարմնոյ նց՝ յեզեալ լինին ի հող, և հեաւեալ մասունք կծկեալ մղեն զառաջին մասունս և այնպէս գաղարեալ գնան։ Որոց բազում տեսակք գտանին. են որք ունին զցցունս ի գլուխն ոտ, ՚ՈՂ ՁՆ. Ճ և են որք ունին ոտս. են որք ձուածին են, և են որք կենդանածին ոտ ՂՃՆ, ունից տուա կրկին է. և ոմանց լեզու երկ ճիղ, ոտ երկայն օձն ՅՐ ՁՆ. Ճ՞. որք և հանապազ աձին և կեան ի հարբերաւոր ամս։

1 Տեսակք սողնոց համարին լինել իբր 180. բայց են և բազումք որք անծանօթ են մեզ. Տեսաւ ի նորա գիւտ հոն տեսակ մի նշանաւոր զեղնոյ. որոյ բովանդակ մարմինն երևի ոտ հիւսուած տերևոյ. իբր զի՝ թևք նր են կէս տերևոյ, որք բերեալ առ միմեանս ձևանայ տերև մի. սորին կոյն մարմնոյն է տերև մի աղօտագոյն. ունի երկու սլաքաձև ոտս, և 6 ճիրանս, նման տերևոյ։

2 Պատմեն հնախօսք, թէ երկայնութիւն այսր կենդանոյ էր 120 ոտնաչափ. զոր սպանին մանգղոնիօք՝ զօրք ատաիկոսի արքային. այլ այս՝ յառասպելեաց է սակի։

3 Բազումք ի նախնեաց համարէին թէ այս օձ միայն

815 Օ՛հնէ է սապէն։
Ասպիդն է ժանտ օձ՝ դառըն թիւնալի,
Թըշնամի մարդոյ՝ կենդանեաց սեռի.
Որ և՛ ի սակաւ՝ ժամուց միջոցի,
Ղրաւէ ըզմարդ՝ առանց այտուցի։

816 Յո՛ սերասպէն։
Սերասպետն՝ ի մեզ՝ եղջերուի կոչի, [1]
Զի ունի եղջիւրս՝ ըստ եղջերը այծի.
Խակ իժն է ժանտ օձ՝ յաւէտ չարաճոյն,
Այլ միան օգտակար՝ ի դեղ պիտանի։

817
Տեսակ ժանտ օձի՝ գտաւ յափրիկէ, [2]
Որ թաքեալ հեռուստ՝ զաչըս արատէ.
Եթէ ոչ կրնոջ՝ կաթամբ լուսոցի,
Փուքով կուբանայ՝ ցաւօք վըշտալի։

Հայեցիւք սպանանէ զմարդ. որ է անհաւատի։ Խակ խարամանին յաճախեալ յափրիկէ՛ի խալեթէն պատճառէ անհնարին ծարաւ և անդէն սպանանէ։

1 Ա՛յս օձ է՝ ըստ Զե. ձբ. ունի՛ ի վր ճակատուն եղջիւրս որոյ մեծքին սուաւր է և երկու կանգնաչափ երկայն. գոյնն գորով աւազանման՝ գարանի յաւազուտս եթովպիոյ, և որպէս զեղջերուս. երբեմն նաև յարձակի՛ ի վր հեծելոց. նաև վիրաւորէ ասէն զոտս ձիոց, և ապա զմարդն։ Խժն՝ կորիւնս ծնանի կենդանիս մինչև 20. բայց մի մի յաւուրն. սորա երկայնութիւն լինի մի կանգուն. որոմ նախնիք պաշտօն ինն ճճայիւն ընծայէին. ոմն տեսանի՛ի հին գրոմս։ Գոյ և այլ տեսակ անթոյն օձի գալլիոյ կոչեցեալ, որ ունի 4 ոտս կարճիկս հինգ մատնեաւս, և լեզու երկձիղ, մինր են տասմունք նր. ծնանի կորիւնս 10, կի՛ 12. ըստ Զե. ձբ։

2 Սորա Թուքն է թիւնաւոր. զոր՛ի հեռուստ ցայտեցուցեալ յաչս Ջանապարհորդաց՝ պատճառէ անհնարին ցաւ. և եթէ ոչ փուքով լուսացի կաթամբ կնոջ, անշուշտ կուբանայ։ Իժն զնեցոյն, որ ոտտուցեալ սպանայ ըստ օգս մինչև յ20 կանգուն յերկայնութենէ։

818

Պայ և այլ տեսակ՝ դըժբընդակ օձի ,[1]
ոյը ՚ի ծայը տըտան՝ ձայն խմըն հընչի .
Յորոյ ՚ի սողալ՝ անցաւորք փախչին ,
զի անտի լըսի՝ ձայն ինչ զանդակի :

819 Յինչ պէտս են ընդ :

Զայն օձից պահի՝ ՚ի լընտաբը նոցին ,[2]
խաձեալ ըզմարմին՝ Թափեն ՚ի վիրին .
Որով երբ Թըռչուն՝ և զայլ ինչ ուտեն ,
Թունով և ջերմամբ՝ քայքայեալ մարսեն :

1 Զայս տեսակ օձի տեսին ՚ի գօնիկօ . որ մատ ՚ի ծայր տտան ունի ուռոյց մի փոքրիկ . յորմէ ՚ի գնալն հնչէ ձայն ինչ զանգակի : Գտանին անդ և օյլ ընտատրփ կիմ տեսակք վիշապաց . որք ունին և երկու կարճ ոտս . գոյն նց կանաչախառն կապոյտ , և մարթին Թէիոտ . բնակիչք ընծայեն սց պաշտօն ինչ : ՚ի 1812 երեւեցաւ ՚ի կոմսնտա կարնոյ օձ մի ՟ՀՆ , ՁԼ . ՃՂ . որ ըստ պատմելոյ ականատեսից՝ էր հէրատանճ և մեծ . Թեւիք նր ցոլացուցանէին զլոյս , և ինքն երևեր ճառագայթարձակ . մինչ զի՝ ոչ ոք իշնեաց գիտել ՚ի վր նր . ապա դարձաւ ՚ի լեառն , ուսան իջնալն էր : Գոյ և տեսակ մի ապաթդոյն օձի յատիրիկէ երկայն 7 ոտնա՚ . և ստուար իբրև զմէջս մարդոյ . գըլուխն՝ մեծ և բոլորչն . աչքն՝ մեծաբաց և կապուտակ . մարթին՝ աստղանիչ : Զայս օձ զազրատեսիլ՝ պաշտէն կոյր կուրնեացիք իբրև Հնամակալ . ՃԾ վր բնութիբ հեզ լինլոյն :

2 Թոյն օձից ամիսփնեալ կայ ՚ի մաչկեղէն ինչ պարկի զետեղելոյ ՚ի ընտերս նոցա . ա՚որ գտանի ատասին՝ ծակ և սուր , որ հաղորդի Թիւնաւելց անօթոյն ՚ի ձեռն խողովակի ինչ . ՚ի խայթելն օձից , Թիւնն ը ծակն ատամն Թափի ՚ի վէրսն . և ապա խառնեալ ընդ արեան պատճառէ անհնարին ջերմութիբ վիրաւորելոյն , և այն պէս սպանանէ , եթէ ոչ ապաքինեսցի փութով : Եւ զի ատամբքս օձից գոլով երկայնձէ անյարմար է առ մարսողութիբ . և նորին աղագաւ օձք ՚ի ձեռն ջերմութեան Թիւնոյ դիւրաս մարսեն զկենդանիս : Այս Թիւնաւորս

820 Օ՜հե՛լ են մողեսք։

Ա՛րդ մղձաք և գորտք՝ յայլ կարգ վերածեին,
առանց սողելոյ՝ գընան և շրջին.
Որպէս է կալ՛ծուծ՝ կանաչ աստղանիշ,
յորոց և բազումք՝ թիւնաւոր լինին։

որակութեի չար և մահաբեր ոչ միայն է ՛ի կենդանիս, այլև ՛ի աուկնի և ՛ի հանգս. բազում գազանք ծնեալք ՛ի չոր և ՛ի ջերմին վայրս թիւնաւոր լինին։ Դոյ թոյն որ լուծանէ և հրդեհէ զարիւն. և է որ խանգարէ զգօրծո՛ բանս։ Իակ մեծութեի օձից աւելի գասին քան զ40 կամ 50 ոտնա՛։ երկայնակեաց են և ընդերկար չարժին յետ սպանանելոյ։ ՛Ի բազում ամիս անսուաղ մնան փակեալ յարկեզ. մինչ զի յետ անցանելոյ 10 ամսոց տակաւին առոյգ են և թիւնաւոր. բայց եթէ բացցի բերան սրբ կեղ, ՛ի չնչել զօդն՝ մեռանին։

1 Այդն սեռակք կենդանեաց սիրաշա կոչին վ՛՛՛՛, կի՛ կապաւ, զի ուղին ոտս և զետան յերկրի. որոց տե՛ սակք բազում են յոյժ. ՛ի սոցանէ է կալ՛ծուծն կի՛ կովա դ իայն՝ մղձէս թիւնաւոր. որոց ոմանք մեծ և կանաչ. այլք տուաւր և ասպղանիչ։ Որպէս գ՛ կի՛ յ՛ որ լինի յամերիկա. Զ՛՛. ՃՁ։ և Զ՛՛. ՃՁ։ Ա՛յլ է և թիւնաւոր մղձէն Վ՛՛՛ձ ձայնեալ. որ ուղի երկու մեջկաթեա ՛ի վ՛՛ կողից. մարթ նորա կապոյտ և սևանիչ. ուղի մարչկա, զոր ըստ հաճոյս ընու օգով առ ՛ի թեթևանալ և երկու պարկս, զոր ՛ի թոչելն՝ ուռուցանէ. գ՛՛ վ՛՛. Զ՛՛. ՃՁ։ Թռուցամ զվիշապանման կենդանին ՛՛՛, Զ՛՛ ՃՁ։ որ ունի երկու թեւս և ոտս. զոր ոմանք յուշկապարիկ ձայնեն։ Ղ՛՛մանապէս և գ՛՛ջ՛՛ են սիրաշա զեռունք. որք ծնանին ՛ի չոր զպարկ ինչ նման ձուոց. որք բեղմնաւորել սեր մամբ արուի, զինի 20 աւուրց լինին երկայնաձև, և ոտ ամակաւ ամակաւ բուսանի գլուխ նոցա, և ոտս, ՛ի 50 աւուրս կենդանական նմանեալ ձկան։ Ապա սնեալ ա՛ ՃՁին և ձևանալ գլուխ գորտոց, և ելանեն ոտք ՛ի 50 ա՛ ւուրս, և ապա անկանի ոտս նոցա և ձևանան գորտք։ Գոտանի յիսալիա և սեռակ մի գորտոց, ՛ի չափ գլխոյ մարգոյ, որք զձագս իւրեանց ՛ի վերայ թիկանց կրեն։ Եւ սեռակ մի՝ որոց գլուխն է եռանկիւնի և գոյնն կաղ միր. և սեռակ մի ևս փշամորթ և եղջիւրաւոր. որպէս է՛՛. Զ՛՛. ՃՁ։

821 Օ՛ինչ է Լաբանելօլա։

Լաբանելօլա է՝ տեսակ մողեսի,[1]
Թիւնաւորեալ մարդն՝ անըզգայ լինի.
Բայց իբրև լըսե՝ ըզձայն քընարի,
առ սակաւ սակաւ՝ շարժեալ բըժըշկի։

822 Կո՛ գեմնաւիծն։

Խակ գեմնաւիծն է՝ նըմանն մողեսի,[2]
այլ խայտախարիւ՝ փայլուն զերթ հայլի.
Յորում մծտաւոր՝ առարկայք զընկին,
ոչ լեզուն ի դուրս՝ ձըգեալ կերակրի։

823 Կո՛ սալամանդր։

Կ՛կենդանի սեաւ՝ ի ձև մողեսի,[3]
անթոյն ասլիկաւ՝ տեսլեամբ սոսկալի.
Ո՞նուէր ցուրտ է յոյժ՝ մինչ տոկալ հնըոյ,
ուստ ըզկըրակ՝ առանց այրելոյ։

1 Ա՛յս կենդանի յաճախեալ յիտալիա է տեսակ մինչ մոզեսի, բայց մարմինն գոլով գնաւակաձև. ըստ իրաց մինչ նման գոանի սարգի. որոյ գոյն է գորշ, մորեն՝ ան. հարթ և խիստ. զորմէ պատմի Թէ ոմն հարուածեալ ի սմանէ՝ զառաջինն սկսաւ սիրել, ապա հեալ չարաչար. զարի բազկին ախարացաւ, դէմքն խորշումեցաւ, և հուսկ յետոյ անզգայացաւ։ Ապա ել լսելն զձայն քնարի նախ սկսաւ չարժել զմատունս, ապա զբազուկս, և զամենայն մարմինն. և զկնի ինքնին յարուցեալ սկսաւ պարել մինչև ճ ժամն. ապա ի դադարիլ ձայնի քնարին անկաւ ի մեղձս հիձա ի քիրան համակեալ, և այսպէս շարունակէ աւուրս մինչ առողջացաւ։ Ջայս օրինակ երաժշտական բժշկութեանն մերժեն վերջին բնաբանք։

2 Սորա երկայնութիւնն է 2 քիլ դ. Զե. ձճ. գոյն նորա կանաչ. որ զերկայն լեզուն չ ձգեալ ի դուրս՝ որ ապ զմիջնիս և զձանձս, և ուստ. զլ լեզուն զպածեալ է խայտին հիւեղով, յորում մածնուն կենդանիք. Թէ ոչ կարէ ամիս ի միալ անսուաղ։

3 Սալամանդրն ես. Զե. ձճէ. ունի ի ներքոյ մորթոյն հիւեղ մինչ ցուրտ, զոր՝ երբ անկանի ի հուր հոսէ

824 Լա՛ ան|ուանէպ։
Ընկուզիկ կենդանին՝ է՝ ի չափ կատուի,[1]
բայց ձևն է նման՝ կովադիայի.
Ազգէ հըպետոց՝ ցուրտ և դող ուժգին,
փարատէ ըզտենդ՝ հրպտեալ հիւանդին։

825 Օ՛ր ինչ են որդուանք։
Որդ որդանց բազում՝ տեսակք գտանին,[2]
ոմանք են աղիաղիք՝ և են որք ոտչին.

յիւրմէ, և այնու պահի՝ ի հրոյ. և երբեմն չիջուցանէ։ Եթէ հատցի տուա սուտ, անդէն բուսանի. սոքա փոխեն զնուրբ մարդ երեսաց մարթոյ իւրեանց՝ ի 8 աւուրս միանգամ, որպէս և գորոք։

1 Այս նորատեսակ կենդանի նման է մոզեսի. և բնութիւն այնչափ ցուրտ, զի դող սաստիկ պատճառէ որոց հպին՝ ի նա, զոր հապիշք՝ ի կիր առնուն՝ ի բժշկութիւն տենդից՝ հպեցուցանելով յախտացեալն. յորմէ անհնարին ցաւ պատճառի յամենայն անդամն, և տպա առողջանայ տեղ։

2 Որդունք թէպէտ են փանաքի, այլ մեծապարբաւ քարողք մեծութիւն արարչին հնչին մարմնով իւրեանց և սքանչելի յատկութիւն և գործով, զորոց զտեսակս ոմանք եդին 1200. բայց են իբր անհամար. որոց ոմանք ունին զլոյս՝ ի տուտս, որպէս են խոսոբայ. ոմանք հանեն՝ ի մարմնոց իւրեանց իւղ ինչ, և հիւթ. ոմանք վեցոտնեայ, բազմոտնեայ կամ հարիւրոտնեայ, են. որպէս ըստ, յորոյ վերայ գոն ասաղաձև կապոյտ նիշք, Զ. ձիք։ ի մէջ սոցա անոտն որդունք ինքեանք բաժանելով՝ ի մասունս բազմանան. քանզի մարմին նոցա բազկանայ յանրակաց, որք բաժանել յիրերաց՝ նոր որդունք արտադրին. բայց և բազումք են յոյժ, յորոց արտադրին և ձանձք. որք զձուս դնեն՝ ի կէզևանս ծառոց, ի տերև, ի պտուղս, յայլս, նաև՝ ի հեղանիւթս. ուր յետ ձմերան՝ ի ձանձ փոխակերպեալ թռանին. մի որոյ ամենայն ուրեք գտանին որդունք, մինչև՝ ի մարթս կենդանեաց և յայլս նաև յուղեցս (919)։ Բազումք՝ ի սոցանէ ոչ չընչեն ընդ բերանս, այլ ընդ ծակս տատն, կամ թիկանց։ Ելինն և յայլս կենդանեաց ձգէ, երկայնաձև, բոլոր

Յորոց և բաղումք՝ յորժամ կըտրասին, ամենայն մասունք՝ կենդանի լինին։

չի, քառասանի, ևն. որք երբեմն չարժեալ և սպառեալ զմամոյն, պատճառեն զքաղց ասասիկ, զսպասուն ընդդ, և զքուն ծանր. և երբեմն այնչափ երկայնին, մինչև հարիւրաւոր ոտնաչափ լինին. բայց սոքա աղխաղնեալ համարին 'ի բազում ՃՃեաց։ Աղխաղն որդունք հասա, բակօքն երկայնձև լինին, յորոց զմին կարտաեաց 'ի 40 մասունս ոմանք բնաբան, և ահա 40 որդունք եղեն. իբր զի յաղխաղն կենդանիս բազում թոքք և չարունա, կեալ չարք սրանց նշմարին. որով 'ի բազում մասունս բաժանեալ, խըրաքանչիւր կարծեք ունին զպրծատանս բաւականս առ կենդանական պրծողութեն։ Երբեմն երկու կարծեք զանազան ՃՃեաց եկեալ առ միմեանս, պատուաստեալ լինի մի կենդանի։ 'Ի կարգս սոցա վերաբերին միջատք, կամ բոտոք ձուածինք. որք սիրեալ զերան 'ի վըր ամենայն իրաց, և և ասաղյ (441). որոց ոմանք անշնարին փոքր են մինչև չանկանիլ ըստ ասելոյ։ 'Ի սոցանէ են «ՔԻՒ կենդանեաց. որք խայթոցաւ բերանոյ իւրեանց ծակեալ զմարմին՝ դնեն զձուս. և այնպէս կենդանացեալ գոյանան 'ի մարթ կենդանեաց։ Գոյ 'ի չինս և բազում կամ որդն փոքրիկ երբև լուս. որ անէ բևոյթ կիՃԹաւն ընդ մաեալ 'ի ծառս ծծէ զչիւթս ծառոյն, և փոխարկէ 'ի մամ սպիտակ, որ զորէն կայլակաց հոսի 'ի վայր։ Ոմանք 'ի միջատաց են պրեզ. այլք ընդ ծէն. ձր առեալ զմի փոքրիկ ոջիլ անկոց գիցէ միայնակ 'ի մէջ սպակւոյ՝ երբ հասանէ 'ի չափ մեծութեն ծնանի ինքնին. և 'ի միջոցի սակաւ աւուրց բազմանայ բազում ծնունդք. որք մինչև յերդ ծնունդն ածին։ Սոքա 'ի գալնան և յամարան են կենդանածին. իսկ յաշնան ձուածին. յարգանդ եգաց գտանի ԹԷ կենդանի, և ԹԷ ձու։ Ծնունդք զմ զորէն նաահաբ, երկայնաձև և սպիտակ ասղնաչափ. յաձախեալ 'ի նաւահանգիստս ինչ պտնասի, որք փանաքի մարմնոյն ծակին զյատակս նաւուց, և ընդմանեն 'ի տախտակս, որով 'ի սակաւ ժամանակի անպէտանացուցանեն զնաւն։ Կան են սմա և մաղաքաւոր ՃՃիք. որք գոյացեալք երբեմն ըստ մարթոյ տղայոց խոշտանգեն զնոսա։ Աչսոյիսի որդունք գոյանան և 'ի սրունս մարդոյ 'ի հնդկաստան, և են երկայն 7 գրիւ չափ, և համ պակաս։

826 Ո՞վ ինչ են կենդանաբոյս։

Խոկ կենդանաբոյսք՝ ըստ բուսասկանին, [1]
ոստովք և բընովք՝ աձին երկայնին.
Ամանք ծառաձև՝ և կէսք ծաղկաձև,
ոմանք անգըլուխ՝ են որք սիրտ չունին։

1 Սոքա իբրև զբոյս աձին, անանին, և սերին առանց արմատի, վո զի բուսաւցանէն ի մարմնոց իւրեանց զաւակս զօրէն ձիւղոց, և կիմ հանէն զձուս զօրէն սերմանց. որք կոչէ յիր ինչ՝ լինին արմատ այլոց կենդանաբուսոց. որոց թէ հատցին ոտեղունք, բազմանան։ Սակայն մին սոցա է իբր պարկ ինչ, ունելով միայն զբերան և զթեւս ի տեղի ձեռաց, որովք կալեալ զմանր կենդաներս, ուտէն և փութով մարսէն։ Գոհանին բազում անգամ ի վոսս. ոմանք են ծաղկեայ. զի երբեմն իբր մի մի ծաղիկ ի վերայ միոյ ծղի բուսանալ, որք արագ արագ չորժեն զչըթուն. այս ծաղիկք զատեալ կուտին ի յեր նոսրան ինչ, յորոց ելանէ այլ ծաղիկ. և ապա կծկեալ լինի կոկոնաձև. յորմէ ելանէ կրկին ծաղիկ, և սոքա այսպէս բազմանան, և լինին իբր թուփ բազմատեսակ։ Ոմանք են մանեայք. որք ունին զգլուխս և զմանր ոտս. առաքս հանեալ յինքեանց թէլս՝ լինին նոր կենդանիք. ուր առաջինն լինի արմատ այլոց, և այնպէս բազմանան։ Եթէ հատցին անդամքն՝ անդրէն բուսանին, իսկ եթէ գլուխն ձեղքեսցի՝ լինին երկու գլուխք։ Եթէ հատցի գլուխն, և այլ անդամ գիտի առ նմին՝ պատուաստանի։ Գոյ և ծովային կենդանաբոյս, որ հատատաի ի վր կարծր իրաց ինչ. ի սոցա սակի է բոսպն, որ համարի բոյս ծովու. բայց զննեալ գտին, զի է պատիճ կենդանեաց. որովհետև գոն ի նմա բազում կենդանիք, կիմ որդունք ծովու, որոց մաշիլք և հիւթք մարմնոց տակաւ տակաւ կարծրանան, և ապա քարանան. յորս բուսանալ այլ կենդանաբոյսք՝ սերին իբրև զձիւղ. և այնպէս լինի թուփ ինչ անտեսիւ ի մէջ ծովու. որ և բուսանի չըջուն՝ արմատ ի վեր, և ոստք ի խոնարհ. չունի արմատս՝ կուտի ի քարինս. գոն նորա կարմիր, բայց լինի և ապուտակ ի հիւսիսային ծովն։ Գոյ և սեւագ մի, որ փայլի. ի սոցանէ է ծ տունկ ծովային. Զև. ՃԺԷ։

827 Զ՚ԸՔ ԵՂԷՆ ՕԹԱՅԻՆԻՑ ։

Օդայինք եղէն՝ յօր հինգերորդի ,[1]
՚ի ջրոյ ստեղծեալ՝ թևեն յերերի .
Որոց բազմազան՝ տեսակք որոշին ,
որպէս ձանձ թռչունք՝ մարախ ըստ մեղուին։

828 Զ ՈՐ ՔԻՆ ԵՆ ԹՌՉՈՒՆՔ ։

Թռչունքն փետրազարդք՝ յօդըս դեգերին ,[2]
սլատաւեալ ղեթեր՝ թևօք բաբախին .
Ոմանք ձկըլնկեր՝ կամ ամենակեր ,
ոմանք ջըրային՝ և ցամաքային ։

1 Օդայինն կենդանիք են ձուածինք , որք համարին Թռուցիկ սողունք օդոյ . որոց ոմանք են փետրազարդք , ոչ թռչունք . և ոմանք լերկ , որպէս մարախք , և ձանձք այլովքն հանգերձ ։

2 Թռչունք կոչազէնիք ունին կրկին չարժմունս , թըռչին և չրջին ոտիւք . գլուխ նոցա՝ այնպէս է յօրինեալ , զի դիւրաւ պատաւեն զօդն , և ականջք նոցա զետեղեալ ՚ի գլուխն վասն նոյն պատճառի ։ Ծնօտք նոցա երկայնեալ ՚ի գլխոյ անտի գնան ՚ի կտուց , և ՚ի մի կէս միանան ։ Աչք նոցա գլխով գնատճև՝ չըջաապիւռ տեսանեն զամ ինչ՝ , և սրատես են յոյժ քան զյորբրատանեաց ։ Հուսկ յետոյ կազմուած մարմնոյ նոցա է երրև անօթ ինչ թևեվ յօրիւ նեալ առ ՚ի հեշտ գնալ յօդս ։ Ունին նաև զիւղ ինչ ՚ի յետոյն , որով բազում անգամ կացաւն օծանեն զիւեւտուրս , և այնպէս ոչ տանկանան ՚ի ջրոյ ։ Կրկին է ստոմաքս , մին ՚ի կակղել զկալեաւն , և միւսն ՚ի մարսել ։ Ունին պանուկնս ՚ի վր կրծոց այնպէս զօրաւոր , զի անվատահ ՚ի բազում ժամս չարժեն զթև ։ Տեսակք թռչնոց հաշուին երբ 2500 . որոց ոմանք են գեղեցկաձայն երգեցիկ . ոմանք ոսկեփայլ նկարէն , կէսք ունին ոտս մաչկապատս ՚ի պէտս լուզելոյ . այլք ունին մագիլս ՚ի պէտս որոյ . ոմանք բարձրաթռիչ են , և ոմանք կարճաթիւ , և մեծամարմին , որպէս հաւք և ջայլամն ։ Թռչուն զբոս թռչուն գիշերաշրջիկ և որաակեր ։ Զ ։ ՀԱՅԿ . որդ գլուխ է նման կատուի , և ձայն՝ անախորժ . ուստ զմուկն և զկուրդ ։ Զ ։ Թռչնոց ամրացեալ են կեղեաք , և սաղմն փակեալ ՚ի կեդրոնի երբ ՚ի արտ , զի անվտանգ

829 Ա՛ծիւն ։

Ա՛ծիւն է արքայ՝ Թրուէնոց երամին ,[1]
գազան գիշակեր՝ և քաջամարմին .
Սրսատես հզօր՝ և քարձրաթռիչ ,
համաքաձակ հայի՝ ի լոյս արեգին ։

830

Սա քան զայլ Թռչունս՝ ընդերկար ապրի ,
քանզի ծերութեամբ՝ ասեն ոչ վատի .
Երբ կրտուց նորա՝ անպիտան լինի ,
սովալը լուկ լեալ՝ հիւծի մեռանի ։

831 Ա՛ռ բազէն ։

Բազէն գիշակեր՝ յետ սորա գասի ,[2]
հաւ արեւնարբուս՝ սրբաթռիչ արի .
Ա՛մ յամ՝ զթև՝ բացեալ ընդ հարաւ ,
նորափետուր լեալ՝ լինի կորովի ։

ձնասյէ . զոր ոմանք համարին լինել ի մի կողմն դեղնուցեն ի մաշին ապիտակ . իսկ ձագքն ի ձեւն չերմուեթե թիամոր արատրեալ ի ձուոջ՝ նախ սահման զնչմարանս ողին յետ 14 ժամուց . և ապա զսրտին , զուղղղ և զաջսյն . հուսկ յետոյ այլ անդամք կազմակերպին . ոչք և անանին ի սպիտակուցէ և ի դեղնուցէ անտի . մինչև բեկեալ ապա զկեղևն ի լոյս ընծային յետ 451 ժամուց : Յեգիպտոս չերմուեթէ փուռն ելանեն հաղարաւորք ի միասին ի միջոցի սակաւ աւուրց :

1 Ա՛ծիւն աբ ՀԼ. ՀԺԵ. զօրաւոր և մեծագոյն նմանեալ առիւծու , ոչ յարձակի ի վր գինոյ և ի վր ոսկոր կենդանեաց , և միշտ Թռչուն սման ինչ ի կերակրոյ իւրմէ . և կեայ ՃԸ միամ իգն մինչև ցհնգ . որոյ գոյ տեսակ գծագոտ անուն ի հարաւային Հնդ մեծ . զի երկայնութեն նր Թևէ ի Թև է 16 ոտնաց . և կարօղ է վերացուցանել նաև զվոզր եղինս : Պատմի ի նահնեաց , Թէ արծիւն դնէ զձագս իւր հանդէպ արեգական , եԹէ ոչ հանդուրժէն ձնոց ձագացայնից մերժէ յիւրմէ իբրև խորդս :

2 Բազէք արևմտեան կղզեաց՝ գաղանաբարոյ են յոյժ , մինչև երբեմն կռուիլ ընդ որսորդաց . յորոց բազէ մի բե-

832 Լ՚ անգղ։

Ընգըղ մըսակեր՝ թըռչուն որսական,[1]
Հետամուտ գիշոց՝ սըրատես գազան.
Որ կալեալ մագլօք՝ ըզծիտ գիշերայն,
Դընէ առ կրծովք՝ ջեռնու ձմերայն։

833 Լ՚ կռունկն։

Կռնկուընք ձախնասէր՝ երամով շըրջին,[1]
Կազմեն ըզփաղանգ՝ նըմման զինուորին.
Ըստանդական լեալ՝ գընան պանդըխտին,
Յամառն ՚ի ձմեռն՝ փոխեն զտեղին։

բեալ ՚ի սպանիս արձակեցին անգէն կապեալ ըզ պարս. նոցն զինքըն արբունի, և ահա ՚ի մէ թռչիս եհաս ՚ի տէ. պին վազվազակի։ Սա ոչ և ամ գիշակերք անուանց ինան ըզերկար. զի առաւել ջերմ և չոր գոլով՝ արեամբ կէն. դանեաց չառանան. նմին իրի և կառուց նոյ անյարմար է յըմնել։ ՚ի ը՚ Ջ՚. ճժէ։

1 Ընյս թռչուն գիշախանճ ունի հոտառութեի սուր, մինչ զի հարիւրաւոր մղոնաւ հեռի առնու տեղ գիշոց. և յամախակի հետամուտ լինի պատերազմական զօրաց ճախը առնելով զտեղեաւ կոտորածին։ Ել մեր ձենոյ տեղ ՚ի գէշ օծել անուշահոտութեի, ոչ և ի արբշահոտութեին կենսատու։ ՚ի սոյն կարգի է և ցեխն, որ վերանայ յոյժ ՚ի բարձունս, և յաճան թօթափել խոյանայ ՚ի վայր յափշտակել զձագս։ Ըստ այսմ գոյ ՚ի հապճեպ և թռչուն մի բիւրն անուն, որ արեամբ կենդանեաց անանի, և ՚ի տեսանելն զորսորդս՝ թռուցեալ առաջնորդէ նոցա ՚ի գիւտ որսոյ։

2 Ոմանք ՚ի թռչնոց են սատանայական, ոչ կռունկն, ծիծառն, որպէս, ևն. որք աքանչելի գիտողութիւ նկատեն զժամանակ փոփոխման օդոյ, և այնպէս յամառան գնան ՚ի ցրտին գաւառ, և ՚ի ձմերայնի՝ ՚ի ջերմին։ Ըստ այմմ. * Ըբսին յերկինս ծանեաւ զժամանակ իւր. տատրակ և ծիծառն, և թռչունք վայրիք պահեցին զժամանակ մտից իւրեանց ։։ էր. ը։

834 Ի՝ Ջայլանն։

Ջայլանին է Թըռչուն՝ գազան վիհ խարխլ[1],
սըրընթաց եղեալ՝ վազել որպէս ձի.
Ա՛ոյր ըզԹռիչս՝ ի սրաւարուԹիւն,
ունի զերկայն փող՝ Թևըս փետրալի։

835

Ո՛րնուԹիւն սորա՝ ջերմ է աւելի,
նեղբին կազմուԹիւն զերԹ չորքոտանի.
Ո՛ւտէ ըզկըրակ՝ զերկաԹ ընդ քարի,
գիւրացուցանէ՝ զԹևս որովայնի։

836

Ի՝ սընունդ ձագուց՝ տրխմար գըտանի,[2]
զի Թազէ զձուս՝ յատազուտ վայրի.
Ա՛կայն ելանէն՝ ջերմամբ արեգին,
կերակրին որդւովքն՝ ձագքըն գեռաճին։

837 Ո՞ վնաս է ՀեղուահաւԹ։

Ա՛րդ ՀեղուահաւԹն է՝ գըտիչ փեԹակի,[3]
ի գըտանել զայն՝ յանցըս գեգերի.

1 Ջայլանն յաճախ գեղերի յատազուտս բաբելոնի, և ի ջերմին վայրս. որոյ աչք ոչ միայն ունի զաւորին արտաւանութիւն ըստ այլ Թռչնոց, այլև ունի զվերնին. նաև ուշն յօնս քան կապկաց։ Այլ այնչափ սրընթաց վազէն, զի չհարԹի ժամանել նոցա կենդանի ինչ. և երբեմն առեալ քար ի լայն Թաթս արձակէն զնոսին հետամտաց խրեանց. և այնչափ մեծ լինին, մինչև մարդն կանգուն անցանել ընդ ագռաւիկս նոցա. զորօրինակ ա Բէդ, Ձ՝ Ճժէ։

2 Պատմէ Պլինիոս, Թէ Ջայլանն ծածկէ զպարանոց իւր ի մէջ Թփոց՝ կարծելով Թագուցանել զընտրը մարմինն. * լուեալ է ի նմանէ խնամոտութիւն անդեանն ձա,, գուց || յոչԷ. ՎԼ. զի ձագքն անհնամ եղանեն ի ջերմուԹէ արեւու. բայց ոմանք ի ձուոց գոլով անսերմ նեխին, և որգունք եւան ի նմ. որք լինին կերակուր ձագուցն եղելոց ի սերմնաւորը ձուոց։ Ա՛պարացիք վՋայլանն երբեմն ի գործ ածեն փոխանակ նշոյ։

3 Ա՛յս Թռչուն հասկնում ես Ձ՝ Ճժը. գոլով մեղուաբ

Երբ տեսանէ մարդ՝ բաբախէ ըղձիւս,
տանի յուշանէ՝ նըմին զայն տեղի։

838 Ի հաւալուտն։

Հաւալուտն Թըռչուն՝ նըմին է սագի,[1]
բայց ընդ կըզակաւ՝ պարկ իմչն ունի.
Երբ ձուկըն որսայ՝ դընէ ի պարկի,
և ապա ուտէ ի յանքոյթ տեղի։

839 Ի ջինջուլ։

Դարձեալ ձըկրնկուլ՝ Թըռչուն ծովային,
Թըխասեալ հանէ ձագս՝ ի հանդարտ ծովին.
Որ չորեքտասան՝ աւուրց միջոցին,
ձկ ալեկոծի՝ ծովն ի ձևերին։

840 Ի նոսնակ։

Նոսկ ողջունատուռ՝ Թուխաձին անուանի,
ի հընդկաց անտի՝ մեզ եկաւորի.
Այր լայն ձև լեզուին՝ քան յօդաւորեալ,
ըստ հընչման մարդոյ՝ ձայնէ բարբառի։

841 Ի սիրամարգ։

Նայց սիրամարգն է՝ Թըռչնոց Թագուհի,[2]
գունագոյն ներկեալ՝ ոսկեթել յարգի.

սէր՝ երբ գոանէ ուրեք զհամբարս մեղուաց՝ Թռուցեալ դեպերի առ Ճանապարհին, ի սեսանելն զոր բաբախէ ղձիւս և նշան առեալ երթայ զտեղի առնու ի վր փեթակին. և այնպէս առաջնորդ լեալ առնու և ինչն ըղբաժին իւր ի մեզուէ անտի։ Ցիտող զնդչնէրէն Թռչունն նէապօլսոյ Ն։ Ձ։ ՃՃԹ. որ ունի երկու եղջիւրս ի գլուխն, և է գունագարդ և գեղեցիկ։

1 Նախանձք համարբէին Թէ այս Թռչուն տեսեալ զձագս Թռնաւորեալս յօձից պատառէ զկուրծս, և կաթեցուցեալ զարիւն իւր ի վր նց ապաքինէ. զոր բերբեր յօրիանակ քն։

2 Սիրամարգ կամ աքաքաւն է՝ Ձ։ ՃՃ, է ի լավ հնդկահաւու, փետուրքնորա մանուշակագոյն, կանաչ-

Աղբերով ձեմ՝ չարժելով գըլխին,
պարզե ըզտուտ իւր՝ ընդդէմ արեգին։

842 Նա ֆէոնիկ։

Ծառ զանմահ փիւնիկ՝ հաւքն հ՚բաշալի,
զոր ասեն լինել՝ մի յիւր տեսակի.
Յափրիկեան սահմանն՝ միայն գըտանի,
զորմէ բազում ինչ՝ ի գիրըս պատմի։

843 Նա սոխակ։

Ծառում ցանկալի՝ սոխակ քաղցրաձայն,
ծիծառըն ձըռուօզ՝ գուշակիչ գարնան.
Նա զայլ անհամար՝ տեսակ զանազան,
ե զի գեղգեղիչ՝ ե զի գունազան։

գոյն, և գեղնակիտուած՝ նկարէն, որք ըստ պէսպէս դրից այլազգեաւք երևին ամենագոյն. տուտ նորա մեծ և գեղեցիկ՝ ոսկեգոյծ զարդուք, և աչաձև նկարուք զարդարեալ. զոր ասէպ բանայ հանդէպ արեգական և պան ծայ՝ ի գլուխն ունի քանի մի շուշանաձև փունջս փայլուն փետրոց. իսկ կատուց նորա երկայն և գեղեցիկ։ Ըստ այսմ և ֆոխանն չինաց է, Զե՝ ձին, ըստ այլևայլ մասանց մարմնոյն՝ է ոսկեգոյն, ծիրանեգոյն, և կանաչագոյն. սրունն ունի ցցունս ի գլուխն, տուտ չքնաղ և երկայն։ Ծառ զնաձանձն արագաթռիչ յաճախեալ ի հնդիկս և յամերիկա, ոչնչ կարի մեծ քան զթիթառուն. գլուխ նոցա կանաչագոյն ոսկեհոյլ. պարանոցն կարմրանիչ վայլուն որպես յանկինն, աչքն նման անգամանգի. արուք ունին ցցունս. կատուց նոցա նուրբ խրխռ զաւեղն։

1 Փիւնիկ կի՛ ասէ հաւն հազակեալ ի գիրս նախնեաց համարի մի միայն լինել յիւրում տեսակի, որ յետ 160 ամաց ասեն ծերացեալ կազմէ զիւր բոյն ի խնկենեաց, յորոց վերայ մեռանի. ապա յոչղոյզ ոսկերաց նորա նախ ծնանի որդն, յորմէ արտագրի նմանատիպ հաւ. որք են անհաւատից զըղյգ։ Պատմէ տաճիտոս, Թէ յաւուրս արշակայ՝ երևեցաւ այս նորանշան հաւ Թռուցեալ ընդ հեղհեղաջրեա յաշխարհին եգիպտացւոց. չուէջ զորով ա՛ն պատեալ բազմաՆեան օդականաց Թևակից լինէին նմա։ Տաճ. Ը. գլ. 28։ Սա Թերևս իցէ տեսակ ինչ

844 Օ՜ ինչ են կատոչ։

Լակ կատուք թըռչնոց՝ տուեալ են նոցին,
'ի տեղի զինուց՝ ատամանց ձեռին.
Ուր դիշակերաց՝ կըտուցն է կարճ կոր,
զի ջիմս ցաւատեալս՝ կերկեցեն հեշտին։

845 Լ՜ ընչ։

Լայց թևք տուտ թռչնոց՝ են թի զեկնոցին,[1]
որով 'ի թըռիչ՝ թեքթեքեն ջմայմին.
